Ազգ
Azg
2 ՄԱՐՏ 2013 ՇԱԲԱԹ 30(5113)
ISSN: 1829-1651

# Սաֆարովի արտահանձնումը կքննվի Մարդու իրավունքների եվրոպական դատարանում

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Բուդապեշտում ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովի կողմից կացնահարված ՀՀ ԶՈՒ սպա Գուրգեն Մարգարյանի իրավահաջորդները ու մահափորձի ենթարկված ՀՀ ԶՈՒ ուժերի սպա Հայկ Մակուչյանի ներկայացուցիչները Մարդու իրավունքների եվրոպական դատարան անհատական գանգատ են ներկայացրել Ադրբեջանի եւ Հունգարիայի դեմ, որով պահանջում են ճանաչել, որ Հունգարիայից մարդասպան Ռամիլ Սաֆարովին փոխանցումը, Ադրբեջանում վերջինիս ներումն ու արդարացում-հերոսացումը խախտում են ՄԻԵԴ 2-րդ հոդվածով (կյանքի իրավունք) եւ 14-րդ հոդվածով (խտրականության արգելք):**

*Տես էջ 3*

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Պատասխանատվություն ամեն բանից առաջ

**Չեմ ուզում անդրադառնալ նախորդ օրը Ազատության հրապարակում Րաֆֆի Հովհաննիսյանի հանրահավաքին մեր տաղանդավոր երգահան-երգիչ Ռուբեն Հախվերդյանի արտասանած տխմար մտքերին: Սոցիալական ցանցերով թե այլապես նախորդ գիշերվանից ի վեր նրա ապազգային զառանցանքները քննարկվում-քննադատվում են բազմակողմանիորեն, հետեւաբար ավելացնելու քիչ բան է մնում ինձ: Բայց, կարծում եմ, անհրաժեշտ է անդրադառնալ հանրահավաքը հրավիրածների եւ առաջին հերթին Րաֆֆի Հովհաննիսյանի վարմունքին:**

**Քաղաքական եւ ոչ միայն քաղաքական պրակտիկայում ընդունված անխախտելի կանոն է՝ քո կազմակերպած հավաքներում ամբիոնն ու բարձրախոսը չի կարելի զիջել որեւէ մեկին, որի ասելիքին ու անելիքին վստահ չես 100 տոկոսով: Մանավանդ բազմահազարանոց հավաքներում անպատասխանատու կեցվածքն ու դրսեւորումները անթույլատրելի են ու վտանգավոր, անշուշտ, եթե կազմակերպիչների նպատակն էլ հենց մթնոլորտի ապակայունացումը չէ...**

**Որեւէ հիմք չկա Րաֆֆի Հովհաննիսյանին դիտավորյալ անպատասխանատվության մեջ մեղադրելու, մանավանդ որ նա հաջորդ՝ երեկվա հանրահավաքային «ասուլիսում» իրեն տարանջատեց Հախվերդյանի տխմարություններից, թեեւ ակնկալելի էր, որ նաեւ դատապարտեր նրա արտահայտությունները, որոնք ժխտում են վերջին 25 տարիների մեր կարեւոր նվաճումներից մեկի՝ ներազգային մեկության ու միության:**

**Իրավունք չէինք ունենա վերջին այս շեշտադրումը եւս անելու, եթե «Ժառանգության» ղեկավարը վերոհիշյալ եւ մյուս հավաքներում ամբիոն ու բարձրախոս չտրամադրեր նաեւ որոշ այլ մարդկանց, ովքեր, մեղմ ասած, հաճախ են փաստել իրենց անպատասխանատու լինելը:**

**Առաջին հերթին նկատի ունեմ «Բարեւի» շարժման վաղորդայնին հանկարծ «դարձի եկած» հին-նոր հեղափոխական Նիկոլ Փաշինյանին, որը 5 տարի առաջ, հենց այս օրերին, Մյասնիկյանի արձանի մոտ հավաքված ջղագրգիռ միտինգավորներին հրահրում էր՝ հենց նման առիթի սպասող ոստիկանության հետ բախումների: Տեսնես ո՞ր պաշտոնում է իրեն տեսնում Նիկոլը հիշյալ՝ հինգշաբթի օրվա հանրահավաքում իր իսկ առաջարկած եւ Րաֆֆու կողմից ձեռաց «հանրաքվեի» դրված «ապագա կառավարության» կազմում: Երեւի գլխավոր դատախազի: Պաշտոն՝ որի գործառույթները նա իր վրա վերցրել էր դեռեւս 2008 թ. հունվար-փետրվար ամիսներին, երբ իր խմբագրած թերթի առաջին էջում բացել էր ամենօրյա հատուկ անկյուն՝ «Փետրվարի 19-ին նստելու են» վերնագրով: Նրա ներկայությունը հանրահավաքային պոդյումի վրա՝ վտանգավոր է ըստ ամենայնի, հղի՝ Լինչի դատաստանի հեռանկարով:**

**Ըստ երեւույթին, Րաֆֆի Հովհաննիսյանը չի գիտակցում այս բոլորի վտանգավորության աստիճանը: Նրա ուղեղում դեռեւս մշուշ է ու մլար: Այլապես իր տարբեր ելույթներում մեր երկրի առաջին արտգործնախարարը հանդես չէր գա հախուռն, ոչ պետական մարդու սպառնալիքներով ու հոխորտանքներով, հանդես չէր գա ընտրություններում հօգուտ իրեն չաշխատած բոլոր մարզպետներին, քաղաքապետներին ու գյուղապետներին պատժելու սպառնալիքով, կամովին հրաժարական տալու պահանջով: Այլապես նա հաթաթա չէր տա օտար երկրների պետերին ու միջազգային կազմակերպությունների ղեկավարներին եւ ի թիվս դրանց՝ Պուտինին, Օլանդին, Ջոն Քերիին, Բառոզուին, խրատելով նրանց, նաեւ մեր զույգ կաթողիկոսներին, ինքնաբացարկ տալու, այլապես՝ ինքը այլեւս չի՛ հանդուրժելու...**

**Ըստ երեւույթին, հրձիգների եւ սադրիչների ընկերակցությունը վարակիչ է: Բայց նաեւ՝ շա՛տ վտանգավոր:**

**Պրն Ր. Հովհաննիսյանը պետք չէ մոռանա, որ մեր ժողովուրդը, թե՛ իր եւ թե՛ Սերժ Սարգսյանի օգտին բոլոր ձայն տվողները, գրեթե առանց բացառության, և՛ իշխանություններից և՛ ընդդիմությունից պահանջում են իսկական, խորքային բարեփոխումներ:**

**Պետք չէ մսխել, պետք չէ վտանգել այս պահը:**

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Հետընտրական թեման խորհրդարանում եւ Ազատության հրապարակում

Արտաշատում Րաֆֆի Հովհաննիսյանի արած այն հայտարարությունը, թե պատրաստ է մեկ անգամ եւս հանդիպել նախագահ Սարգսյանի հետ, «Ժառանգություն» խմբակցության ղեկավար **Ռուբիկ Հակոբյանի** մեկնությամբ՝ կառավարությունում մի քանի տեղ վերցնելու իշխանության առաջարկի հետ կապ չունի, քանի որ հանրությունը դեմ է առկա համակարգում եղած խաղի կանոններին: Այնպես որ՝ մի քանի պորտֆել վերցնելը իշխանափոխության ճանապարհ չէ: Իսկ «Ժառանգությունից» **Զարուհի Փոստանջյանը**, ժողովրդի քվեն հափշտակելը գողություն որակելով, ասաց, թե ընդդիմադիր գործիչներից մեկը պաշտոնը նախընտրեց եւ հանցակից դարձավ իշխանություններին՝: Սա հնչել է երեկ, Ազգային ժողովի ճեպազրույցներում: Ժառանգականներից «**Ազգը**» հետաքրքրվեց՝ ասում են, ներկա խորհրդարանը չի արտացոլում քաղաքական իրավիճակը, սակայն բանակցում են այդ խորհրդարանի հետ հետընտրական զարգացումների վերաբերյալ արտահերթ նիստ հրավիրելու համար (մանավանդ՝ մեծամասնության ղեկավարը ասում է՝ կոշտ են ընդդիմության առաջարկները, ու երեւում է, որ չեն ընդունվելու դրանք), ինչ իմաստ ունի, ուրեմն, բանակցելը. «Բանակցում ենք, որ իշխանությունների ներկայացուցիչներին համոզենք, թե խորհրրդարանի խճապատկերը չի արտացոլում խորհրդարանից դուրս իրավիճակը, մենք սպասում ենք, որ իշխանությունը եւս ներկայացնի իր գրավոր առաջարկները, դա սովորական ընթացակարգ է, դրանից հետո միայն պարզ կլինի արտահերթի ճակատագիրը, համենայն դեպս այսօր-վաղը արդեն ամեն ինչ պարզ կլինի», նշեց Ռ. Հակոբյանը: Իսկ թե ինչու Րաֆֆի Հովհաննիսյանը ոչ մի անգամ չի պահանջում նախագահ Սարգսյանի հրաժարականը՝ ժառանգականների կարծիքով այն պահանջվել է ընտրություններով, երբ ժողովուրդն ընտրեց Ր. Հովհաննիսյանին, բացի դրանից՝ երեք կետով Րաֆֆին գնաց Սերժ Սարգսյանի մոտ բանակցությունների եւ այնտեղ կոմպրոմիսային առաջարկներից էր արտահերթ ընտրությունների գնալը: Իսկ հրաժարական պահանջում են նրանից, ով նախագահ է, ում նախագահությունն ընդունված է, իսկ իրենք չեն ընդունում ընտրությունների արդյունքները:

*Տես էջ 2*

## Մարտի 1-ի զոհերի հիշատակին




2008 թվականի մարտի 1-ի զոհերի հիշատակին Սուրբ Սարգիս եկեղեցում երեկ մատուցվեց պատարագ: Պատարագին մասնակցում էին ՀԱԿ-ի եւ «Ժառանգության» ներկայացուցիչներ: Ավելի վաղ «Ժառանգության» եւ Րաֆֆի Հովհաննիսյանի կողմնակիցներն էին եղել Մյասնիկյանի արձանի մոտ՝ զոհերի հիշատակին ծաղկեպսակներ դրել, պատարագից հետո այնտեղ ուղղվեցին նաեւ մյուս ներկաները: ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը ո՛չ պատարագին էր ներկա, ո՛չ ծաղկեպսակ դնելու արարողությանը: Իսկ ահա ՀԱԿ խմբակցության պատգամավոր Նիկոլ Փաշինյանը ներկա էր եւ նշեց, թե մարտի 1-ի պատասխանատվությունը կրում են այդ օրը պետական հեղաշրջում իրականացրած եւ իշխանությունը բռնազավթած անձինք, իսկ մարտի 1-ն օրակարգից դուրս չի գա, քանի դեռ մեղավորները դատարանի առաջ չեն կանգնել: Լրագրողների հետ շփվեցին նաեւ արարողությանը ներկա մարտի 1-ի զոհերի հարազատները:



## «Խոջալու». Ապաշխարել ինչի՞ համար

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**«Զերկալո»-ի մեկնաբանը մի «լավաշ» հոդված է նվիրել արտգործնախարար Նալբանդյանի եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի միջեւ օրերս կայացած հանդիպմանը (տե՛ս http://www.zerkalo.az/2013/nalbandyan-predlagaet-zhit-po-hristianskim-kanonam): Նա անդրադարձել է նաեւ ադրբեջանցի գրող Այլիսլիի մասին Նալբանդյանի ասածին: «Ճիշտ է արել (Նալբանդյանը): Մեզ երեւի դեռ երկար կհիշեցնեն այդ մասին: Մենք հիմարություն ենք արել, համարյա ինչպես միշտ: Բայց մեծ հաշվով գտնվել է մի ադրբեջանցի խաղաղարար, համերաշխության եւ խաղաղության կողմնակից, ընդ որում՝ անվանի: Իսկ ո՞ւր են հայ խաղաղարարները: Չէ՞ որ Այլիսլին անձամբ է խնդրել, որպեսզի նրանք հայտնվեն (՞- Վ. Ա.): Նույնիսկ մատնացույց է արել ապաշխարանքի առարկան՝ Խոջալուն: Ոչ ոք չհայտնվեց»,- գրել է ադրբեջանցի մեկնաբանը:**

**Կարո՞ղ է Խոջալուն «ապաշխարանքի առարկա» լինել հայերիս համար:**

*Տես էջ 8*

## Հունվարին անշարժ գույքի գները՝ առանց էական փոփոխությունների

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2013-ի հունվարին Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 9939 գործարք, ինչը 45,3 տոկոսով ցածր է 2012-ի դեկտեմբերի եւ 2 տոկոսով ավելի 2012-ի հունվարի գործարքների քանակի համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը հունվարին դեկտեմբերի համեմատ նվազել է 35,1 տոկոսով, իսկ 2012-ի հունվարի համեմատ՝ 17,9 տոկոսով: 3095 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 77,2 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35,5 տոկոսն արձանագրվել է Երեւանում:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 58,6 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2012-ի դեկտեմբերի համեմատ, 2013-ի հունվարին բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 37,7 տոկոսով, իսկ նախորդ տարվա հունվարի համեմատ՝ 29,9 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա հունվարին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ աճել են 0,4 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | հունվար 2012 թ. | հունվար 2013 թ. | դեկտեմբեր 2012 թ. |
| Կենտրոն | 400790 | 422050 | 421000 |
| Արաբկիր | 335300 | 350000 | 349500 |
| Քանաքեռ-Զեյթուն | 260800 | 279100 | 278000 |
| Նոր Նորք | 226908 | 243050 | 242850 |
| Ավան | 236248 | 255000 | 250000 |
| Էրեբունի | 234930 | 243500 | 242600 |
| Շենգավիթ | 230464 | 249100 | 248200 |
| Դավթաշեն | 255952 | 269100 | 268500 |
| Աջափնյակ | 221586 | 240500 | 239000 |
| Մալաթիա-Սեբաստիա | 220700 | 235000 | 234100 |
| Նուբարաշեն | 140100 | 145100 | 145000 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 251250 | 266400 | 265300 |

*Տես էջ 4*

# Ադրբեջանական կեղծիքը օտարերկրյա խորհրդարաններում




Չնայած այսօր Հայաստանում քաղաքական դաշտում առաջնայինը դարձել են ներքաղաքական հարաբերություններն ու հետընտրական զարգացումները, սակայն արտաքին քաղաքականության ոլորտում էլ կան զարգացումներ, որոնց վրա հայկական կողմն աչք փակել չի կարող:

ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ **Արտակ Զաքարյանն** ասում է՝ Ադրբեջանը, օգտվելով հանգամանքից, որ Ղարաբաղյան հարցի կարգավորման բանակցային գործընթացը ոչ ակտիվ փուլում է, անցկացնում է հակահայկական քարոզչություն տարբեր երկրների խորհրդարաններում. «Այսօր ադրբեջանական դիվանագիտական բոլոր ռեսուրսներն ուղղված են օտարերկրյա խորհրդարանները ղարաբաղյան հակամարտության քննարկումների թիրախ դարձնելուն»:

Ինչպես միշտ, ադրբեջանական քարոզչությունը հիմնվում է կեղծիքի ու ապատեղեկատվության վրա, սակայն կա մտավախություն, որ որոշ երկրների խորհրդարաններ կգնան ընդառաջ Ադրբեջանի հակահայկական գործողություններին: Օրինակ՝ Չեխիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի՝ Խոջալուի դեպքերի մասին ընդունած բանաձեւը, Սերբիայի ու Բոսնիայի խորհրդարաններում պատրաստվող քննարկումները մտահոգիչ են: Վերջերս էլ Ֆրանսիայի Ազգային ասամբլեայի շենքում եղավ միջադեպ, երբ Սումգայիթի ջարդերի 25-ամյակի կապակցությամբ կազմակերպված միջոցառման ժամանակ եղավ քաշքշուկ հայերի ու ադրբեջանցիների միջեւ, ինչի պատճառ էր դարձել այն, որ երկու ադրբեջանցիներ լռության րոպեով չէին հարգել Սումգայիթի ջարդերում զոհվածների հիշատակը եւ հայտարարել էին լռության րոպե՝ ի հիշատակ Խոջալուի զոհերի: Սրանից հետո Հայ դատի Ֆրանսիայի գրասենյակը դատի է տվել ադրբեջանցիներին: Նշված դեպքերը, ըստ Արտակ Զաքարյանի, նախադեպեր են, որոնցից հետո Ադրբեջանը կարող է ընդլայնել երկրների աշխարհագրությունը: «Ուստի մեր աշխատանքներն ուղղել ենք կասեցնելու Ադրբեջանի նման գործողությունները: Մեզ մտահոգում է ոչ թե այն, թե ինչպիսի ապատեղեկատվություն է տարածում Ադրբեջանը, այլ մտահոգում է, որ մեր բարեկամ, գործընկեր կամ չեզոք երկրների խորհրդարանները կդառնան դիվանագիտական պատերազմի թատերաբեմ», ասում է Արտակ Զաքարյանը, ըստ որի՝ Հայաստանի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը աշխատանքներ է կատարում, որպեսզի մյուս երկրների խորհրդարանները գիտակցեն, որ Ադրբեջանի խնդրանքներն ու առեւտուրը բացասական են անդրադառնում Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ լարվածությունը մեղմելու գործընթացին ու վնասում Հարավային Կովկասում խաղաղության պահպանմանը:

Երեկ «Նովոստի» ակումբում՝ ասուլիսի ժամանակ Արտակ Զաքարյանն ավելացրեց, որ Հայաստանի դիվանագիտական ուժերը Սփյուռքի հետ միասին կգործադրեն ամեն ջանք Ադրբեջանի կողմից տարվող հակահայկական գործընթացները կասեցնելու համար: Բանախոսը հիշեցնում է նաեւ Թուրքիայի մասնակցության մասին. «Մենք անընդհատ խոսում ենք Ադրբեջանից՝ մոռանալով, որ հակահայկական քարոզչության մեջ Թուրքիան անթաքույց օգնում է Ադրբեջանին»:

Ի. Պ.

5-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

## Մարտի 1-ի էջը փակված չէ

**2008 թվականի մարտի 1-ին ողբերգական իրադարձությունների ժամանակ տեղի ունեցած 10 սպանությունները շատերի կարծիքով այդպես էլ մնացին չբացահայտված: Երեկ այդ առթիվ արտահայտվել են խորհրդարանականները:**

**Մարտի 1-ի էջն իրավական առումով փակված չի համարել ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը, չնայած, ըստ նրա, այն փակված է քաղաքական առումով: Սակայն նա վիրավորական է համարում, որ կան քաղաքական շրջանակներ, որոնք քաղաքական գործիքի են վերածում այդ դժբախտությունը: ՕԵԿ խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանը երեկ նշեց. «Ես ոչ դատավոր եմ, ոչ դատախազ, ես չեմ կարող որեւէ մեկին մեղադրել: Եղել են բախումներ, եղել են զոհեր: Համապատասխան մարմինները զբաղվել են դրանով, համապատասխան մարդիկ դատապարտված են»:**

**Հանցագործության չբացահայտվելն անհասկանալի է համարել ՀՅԴ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը՝ նշելով, թե պատմության այդ էջը ծանրացած է բոլորի վրա:**

Մ. Խ.

## «Եթերային խորհրդի» նոր անդամներ

**Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ հրամանագիր է ստորագրել Ռուբեն Ջաղինյանին Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ նշանակելու մասին (վեց տարի ժամկետով)՝ հիմք ընդունելով «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը եւ հաշվի առնելով ՀՀ նախագահի 2013թ. փետրվարի 6-ի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի որոշումը:**

**Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի անցկացման կարգի համաձայն, մինչ հանրապետության ղեկավարի հրամանագիրը, ՀՀ նախագահի կարգադրությամբ ստեղծված մրցութային հանձնաժողովը, փետրվարի 26-ի նիստում քննարկելով մրցույթին մասնակցելու համար ներկայացված 2 դիմումը, որոշում է կայացրել հաղթող ճանաչել մրցույթի պահանջները բավարարող դիմումատուներին՝ Ռուբեն Վլադիմիրի Ջաղինյանին եւ Աստղիկ Շամսի Ավետիսյանին:**

## Զբոսաշրջությունը Հայաստանում ամրագրված է որպես գերակա ոլորտ

*Երեւանում բացվեց կովկասյան զբոսաշրջային CTS 2013 ցուցահանդեսը*




«Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում երեկ մեկնարկեց կովկասյան տասներկուերորդ զբոսաշրջային CTS 2013 եռօրյա ցուցահանդեսը, որին մասնակցում էին 75 ընկերություններ Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից, Վրաստանից, Հունաստանից, Եգիպտոսից, Թուրքիայից, Արգենտինայից եւ Արաբական Միացյալ Էմիրություններից:

Ցուցահանդեսի բացմանը ելույթ ունեցավ Հայաստանի էկոնոմիկայի փոխնախարար **Արա Պետրոսյանը**: Նա նշեց, որ զբոսաշրջությունը Հայաստանում ամրագրված է որպես գերակա ոլորտ, որը զարգացման փուլում է եւ գնում է դեպի նոր նվաճումներ: «Այն լավագույնս ցուցադրում է ապակենտրոնացման գործընթացները մայրաքաղաքից դեպի հեռավոր շրջաններ», ասաց փոխնախարարը:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության ղեկավար Քարեն Հիլիարդն էլ կարծիք հայտնեց, որ տուրիզմը, տեղեկատվական տեխնոլոգիաները, ագրոբիզնեսն ու դեղագործությունն աճի ամենամեծ ներուժն ունեն գալիք հինգ տարիների ընթացքում:

Ա. Մ.

## Երեւանի համայնքային ընտրություններին՝ դեռ անպատրաստ

**Չնայած մարտի 11-ին պետք է արդեն կազմված ու ներկայացված լինեն մայիսի 5-ին Երեւանի համայնքային ընտրությունների համար կուսակցությունների համամասնական ցուցակները, սակայն առայժմ ՀՀԿ-ն է որոշել, թե ով է գլխավորելու այդ ցուցակը՝ Երեւանի ներկա քաղաքապետ Տարոն Մարգարյանը: Դեռ մասնակցության հարցը չեն քննարկել ՀՅԴ-ում, ԲՀԿ-ում, ՀԱԿ-ում, «Ժառանգությունում»: Վերջինի անդամները ամեն ինչ կապում են ներկա հետընտրական գործընթացների հանգուցալուծման հետ, իսկ ՀՅԴ-ից Ա. Ռուստամյանն արդյունավետ է համարում միասնական ֆորմատով մասնակցությունն այդ ընտրություններին:**

**Ավելի ուշ պարզ դարձավ, որ ՕԵԿ-ը որոշել է ընտրություններին մասնակցել Արմեն Երիցյան, Հովհ. Շահինյան եւ Սոֆիա Արթեյան եռյակի գլխավորությամբ:**

Մ. Խ.

## Հետընտրական թեման խորհրդարանում եւ Ազատության հրապարակում

*1-ին էջից*

Րաֆֆի Հովհաննիսյանն ավելի վաղ ասել էր, որ խորհրդարանում տեղի ունեցողը իր հետ կապ չունի, դա հարցրին Ռ. Հակոբյանին. Ր. Հովհաննիսյանին տեղեկացրել են, նա ընդունել է ի գիտություն, միասին պայմանավորվել են, որ մյուս խմբակցությունների հետ նախաձեռնելու են արտահերթ նիստ, պարզաբանեց «Ժառանգություն» խմբակցության ղեկավարը:

ՀՅԴ խմբակցության ղեկավար **Արմեն Ռուստամյանը** բանակցությունների եւ դրանց հետ Րաֆֆու կապ չունենալու մասին ասաց հետեւյալը. դա չի կարող առանձին գործընթաց լինել հրապարակի գործընթացից եւ չազդել հասարակական տրամադրությունների վրա. «Դժվարանում եմ դա հասկանալ՝ որովհետեւ ո՞նց կարող է ՀՅԴ խմբակցությունն անկախ գործի իր ղեկավարությունից, եւ ես չեմ կարծում, որ դա ճիշտ է: Մենք խմբակցության մակարդակով կատարում ենք ղեկավարության որոշումը: Դա կուսակցության գործելաոճի հարց է, բայց ինձ համար տարօրինակ է, որովհետեւ չի կարող խմբակցությունը չներկայացնել տվյալ կուսակցությանը: ՀՅԴ-ն չի կարող մտնել մի գործընթացի մեջ, որի վերջը չի տեսնում, որտեղ քայլերի տրամաբանությունը հստակ չի արձանագրված: Հստակ ծրագրի առկայությամբ միայն ՀՅԴ-ն կարող է գնալ մինչեւ վերջ այնքան, որքան ոչ ոք չի պատկերացնում անգամ: Ամեն ինչ պետք է անել, որ ԱԺ-ի նախաձեռնությունը հաջողվի, հստակ օրակարգ, ճանապարհային քարտեզ սահմանվի, եւ այդ օրակարգի իրականացումը ժամանակացույցով կատարվի», ասաց նա՝ հավելելով, թե գնալով ավելի է համոզվում, որ ով էլ լինի նախագահը, ինչպիսի իշխանություններ էլ գան, եթե օրակարգային խնդիրները չլուծվեն, ոչինչ էլ չի փոխվի:

Իսկ ահա Ազատության հրապարակում հրավիրած ասուլիսում Րաֆֆի Հովհաննիսյանը ճեպազրույցներին հնչած տեսակետներից մի քանի րոպե անց կրկին նշեց, թե կապ չունի ԱԺ-ի բանակցությունների գործընթացի հետ, ու այն, ինչ տեղի է ունենում, խորհրդարանականների խնդիրն է, չնայած... կապի մեջ է խմբակցության պատգամավորների հետ, եթե հնարավորություն կա այդ հարցը բարձրացնելու ճանապարհով մի բանի հասնելու, ինչու ոչ:

Բոլոր դեպքերում Ր. Հովհաննիսյանի երեկվա ասուլիսում նորություն չկար՝ ինչո՞ւ Սերժ Սարգսյանի հրաժարականի պահանջ չի հնչեցնում, ընտրությունների արդյունքների վիճարկման համար ՍԴ դիմել-չդիմելը եւ անպարզ մնացած մի շարք հարցերի պատասխանն ի վերջո այսօրվա հանրահավաքում նա կտա: Ասաց, որ բոլոր գործողությունները սահմանադրական են լինելու, քաղաքապետի ընտրություններին եւ բոլոր մնացյալ ընտրություններին մասնակցության մասին դեռ կխոսվի եւ որոշումներ կկայացվեն, երբ հաղթահարվի, իր խոսքով, «համազգային այս ճգնաժամը»: Նա զգուշացրեց, թե արտաքին վտանգը պատրվակ անելով ժողովրդի հաղթանակը հեգնողները չեն հաջողելու, ու թող ոչ մեկը ժողովրդավարության դասեր չտա, եթե պատրաստ չենք ճանաչելու ժողովրդի ընտրական իրավունքը:

Երեկ Ր. Հովհաննիսյանն ու նրա կողմնակիցները բացօթյա երթով գնացին Մյասնիկյանի արձանի մոտ եւ ծաղիկներ դրեցին մարտի 1-ի զոհերի հիշատակին:

Մ. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշուապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Անցուդարձ

# «Budapester Zeitung». «Վերականգնման ցանկություն չի նկատվում»

Հունգարիայի մայրաքաղաքում լույս տեսնող գերմանալեզու «Բուդապեշտեր ցայթունգ» («Budapester Zeitung») շաբաթաթերթի փետրվարի 24-ի համարից տեղեկանում ենք, որ տեղի հայ համայնքը փետրվարի 12-ին հիշատակել է 2004-ին Բուդապեշտում կացնահարված հայ սպա Գուրգեն Մարգարյանի մահվան տարելիցը՝ Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված խաչքարի առջեւ տեղադրված նրա լուսանկարի առջեւ մոմեր վառելով, աղոթելով: Միջոցառումից հետո համայնքի անդամները հավաքվել են հայ մշակույթի կենտրոնում՝ հայ-հունգարական երկկողմ հարաբերությունների արդի վիճակի մասին բանավիճելու: Թերթը հիշեցնում է, թե հայ սպային կացնահարած Սաֆարովին Ադրբեջանին արտահանձնելուց հետո խիստ քննադատության թիրախ է դարձել ոչ միայն մարդասպանին հերոսացնող Ադրբեջանը, այլեւ՝ Հունգարիան: Հայ համայնքի փոխնախագահ **Ալեքս Ավանեսյանը** շաբաթաթերթին հայտնել է, թե Հունգարիան ցանկություն չի արտահայտում դիվանագիտական հարաբերությունները վերահաստատելու առաջարկի հանդեպ, ինչը փաստում է նաեւ խորհրդարանի անտարբերությունը՝ իրենց միջոցառման հրավերին չեն արձագանքել: «Եվրոպացին Արեւելքն ու նրա՝ պատմությունը հաճախ խեղաթյուրող բնակչին չի ճանաչում», ասել է Ավանեսյանը՝ դրական նկատելով, սակայն, հունգարական որոշ համայնքների՝ Հայաստանի քաղաքների հետ գործընկերային կամուրջներ կառուցելու ցանկությունը:

«Այն, ինչ Հունգարիան է անում, քաղաքական ցինիզմ է», ասել է հայ համայնքի փոխնախագահ Նիկողոս Հակոբյանը՝ մանրամասնելով՝ ադրբեջանցի ուսանողներին կրթաթոշակի միջոցով Հունգարիա են բերելու:Դրա դեմ բողոքելու ենք»: Իսկ Ստրասբուրգի մարդու իրավունքների եվրոպական դատարանում էլ հետաքննություն է անցկացվելու: «Սաֆարովի արտահանձնման ժամանակ ամեն ինչ չէ, որ համապատասխանել է պայմանավորվածություններին, Օրբանը դե ֆակտո ներում է շնորհել Սաֆարովին միայն այն բանի համար, որ Ադրբեջանը նրան ու ողջ աշխարհին նավթ է խոստացել: Այդքան նավթ Ադրբեջանը չունի», նկատել է տվել Հակոբյանը: Հայ համայնքի նախագահ **Սեւան Սարգսյանն** էլ շաբաթաթերթին հայտնել է, թե «շատ տխուր է տեսնել այն հանգամանքը, որ Հունգարիան գործը փակված է համարում»: Հունգարական արդարադատությունը սխալ է գործել, թերթին կարծիք է հայտնել հունգարահայ համայնքի իրավաբան նախագահը, քանի որ Սաֆարովն իր արարքի համար չի զղջացել: Ադրբեջանում կմտածեն, թե կարող են Հունգարիայում հայ սպանել ու գրեթե ոչինչ չի լինի: Քննադատական կեցվածք ունենք նաեւ Հունգարիայի ադրբեջանական համայնքի հանդեպ, որ հետապնդում է հակահայկական այս քարոզչությունը: Իսկ Հունգարիան նախընտրում է լռության մատնել այն ամենը, ինչ Հայաստանին է առնչվում», Սեւան Սարգսյանի բառերով է եզրափակել իր հրապարակումը «Բուդապեշտեր ցայթունգը»՝ իր «Վերականգնման ցանկություն չի նկատվում» վերնագրյալ հրապարակման մեջ:



ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Սաֆարովի արտահանձնումը կքննվի Մարդու իրավունքների եվրոպական դատարանում

1-ին էջից

ՀՀ արդարադատության փոխնախարար **Ռուբեն Մելիքյանի** փոխանցմամբ՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետությունը վարույթում կներգրավվի որպես երրորդ կողմ: «Սա անհատական ներկայացված գանգատ է, այդ իսկ պատճառով Հայաստանն այս փուլում եվրոպական դատարանում ընթացող վարույթում մասնակցություն չի ունենալու: Այն ժամանակ, երբ մենք կներգրավվենք վարույթին որպես երրորդ կողմ, ջանասիրաբար ու արդյունավետ կիրականացնենք ՀՀ շահերի պաշտպան ներկայացումը», ասաց փոխնախարարը՝ հավելելով, որ վարույթ ընդունելու գործընթացը բավականաչափ երկար է տեւելու, ինչը բնորոշ է այդ դատարանին: Հետեւաբար, առիթ չկա շտապելու եւ հայտարարելու, որ վարույթն արդեն ընդունվել է:

«Բայց նկատի ունենալով այն աշխատանքը, որ փաստաբանական խումբը կատարել է գանգատը նախապատրաստելիս, վստահ ենք՝ գանգատը կհաղթահարի ձեւական բարիերներն ու կարձանագրվի առաջընթաց: Մի քանի բան հստակ է. նախ՝ խախտման փաստի ճանաչումը, ինչը շատ կարեւոր է հետագայում նման դեպքերի կանխարգելման համար: Հետագայում, երբ մենք ունենանք ՄԻԵԴ-ի վճիռը, հնարավոր է, որ նոր գործընթաց սկսվի, որը ոչ թե դատարանում է իրականացվելու, այլ ԵԽ Նախարարների կոմիտեում, որն էլ վերահսկելու է, թե ինչ եղանակներով է վճիռը հնարավոր կատարել», ասաց Մելիքյանը՝ հավելելով, որ վճիռների կատարման տարբեր եղանակներ կան, այդ թվում եւ մինչեւ խախտումը եղած վիճակի վերականգնումը:

Փոխնախարարի խոսքերով՝ դեռ վաղաժամ է խոսել արդյունքների մասին, քանի որ դեռ պետք է լինեն գործընթաց ու վճիռ, սակայն մի բան հստակ է. «Միջազգային իրավունքը հարուստ է բազմաթիվ գործիքներով, որոնք հնարավորություն են տալիս խախտման փաստի հետ կապված ունենալ դրական արդյունք»: Միջազգային պրակտիկայում նման համաներման նախադեպ դեռ չի գրանցվել, ու արձագանքն էլ կլինի համապատասխան: «Նման գործ եվրոպական դատարանում չի եղել, այսպիսի խայտառակ խախտում չի եղել, երբ դատապարտված մարդասպանին ոչ միայն ներում են շնորհում, այլեւ վերականգնում աշխատավարձն ու պաշտոնը: Գործին պետք է համարժեք գնահատական տրվի»:

Արդարադատության փոխնախարար **Եղիշե Կիրակոսյանի** մեկնաբանությամբ՝ նախարարությունը վերջին ամիսներին ձեռնարկել է բազմաթիվ քայլեր, որոնք նպատակ են հետապնդում բարձրացնելու Ադրբեջանի կատարած քայլի ոչ իրավաչափ լինելը միջազգային իրավունքի տեսանկյունից:

«Նախ խնդրի մասին պետք է բարձրաձայնվի ԵԽ-ում՝ կոնվենցիաների կիրառման հարցերով փորձագիտական խմբին, որով պահանջվում է քննարկել 1983 թ. դատապարտյալների փոխանցման մասին Ստրասբուրգի կոնվենցիայի 12-րդ հոդվածը (համաներում եւ ներում շնորհելու իրավունք վերապահող)՝ Ադրբեջանի կողմից կիրառման իրավաչափությունը միջազգային իրավունքի տեսանկյունից: Նախապատրաստվում է եւ առաջիկայում ներկայացվելու է դիմում ՄԱԿ-ի Ռասսայական խտրականության վերացման կոմիտե՝ ուշադրություն հրավիրելով ոչ միայն կոնկրետ դեպքին, այլեւ Ադրբեջանի իրականացրած հակահայկական խտրականության քաղաքականությանը, հայերի նկատմամբ ատելության քարոզմանը Ադրբեջանում»:

Հիշեցնենք, որ 2006-ի ապրիլի 3-ին Բուդապեշտի դատարանը մարդասպան Սաֆարովին դատապարտել էր ցմահ ազատազրկման՝ 30 տարվա ընթացքում առանց ներման իրավունքի: Սակայն 2012-ի օգոստոսի 31-ին հունգարական կառավարությունը ցմահ ազատազրկման դատապարտված Սաֆարովին արտահանձնեց Ադրբեջանին: Բաքվում Սաֆարովին դիմավորեցին որպես ազգային հերոսի, Ադրբեջանի նախագահը նրան ներում շնորհեց, նվիրեց բնակարան, 8 տարվա կուտակված աշխատավարձն ու մայորի կոչում:

Դեպքից հետո Հայաստանը խզեց դիվանագիտական բոլոր հարաբերությունները Հունգարիայի հետ, կատարվածն արժանացավ միջազգային հանրության սուր քննադատությանն ու դատապարտմանը: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ նախորդ տարեվերջին ստեղծվել է աշխատանքային խումբ՝ Ռամիլ Սաֆարովի ներման դեմ միջազգային բողոքարկման կապակցությամբ:



# «Միակ փրկութեան լաստը Հայաստանն է»

*Ֆեյսբուքի Aleppo Armenians խմբում հալեպահայ հայտնի մտավորական, մեր թերթում բազմաթիվ հրապարակումների հեղինակ **Հակոբ Միքայելյանը** հետեւյալ գրառումն է արել.*

- Սփիւռքի մէջ մեր բոլոր գաղութները անխտիր կառուցուած են աւազի վրայ: Աւազի վրայ, որովհետեւ մերը չէ եղած հողը եւ օտար հողի վրայ ինչքան ալ պերճ շէնք բարձրացնես, միեւնոյնն է, օր մը փուլ պիտի գան անոնք:

- Գուշակութիւններ ընելու կամ պատճառներ որոնելու կարիք չկայ, յստակ է՝ ոտքի տակ քու սեփական հողդ չունիս, ուրեմն ուշ կամ կանուխ, կառուցածդ քուկդ չէ այլեւս, գաղութը կը քայքայուի, կ՚այլափոխուի, կը պարպուի, կը ծերանայ, կը հիւծի եւ վերջապէս կը մեռնի:

- Հալէպը, այս պատմական, աւանդապահ, պտղոտ ու շէնշող գաղութը, հիմա մահամերձ է:

- Քանակական ու որակական կորուսաբեր նահանջի մէջ է: Կը պատահի՞ հրաշքը, կը վերապրի՞ գաղութը, կը վերագտնէ՞ իր երբեմնի առողջութիւնը, ո՞վ չի փափաքիր, սակայն ատիկա արուեստական երկարաձգում մը պիտի ըլլայ, որ դարձեալ վերջ պիտի գտնէ օր մը, որ շատ հեռու չի կրնար ըլլալ:

- Հողը, հո՛ղն է ամէնաէականը ազգ մը պայմանաւորող ազդակներուն: Լեզուն, հաւատքը, պատմութիւնը, մշակոյթն ու կենցաղը, բոլորն ալ կարեւոր են, սակայն այս բոլորը առանց հողի չեն դիմանար:

- Իսկ այսօր պատուհասուած Հալէպէն հայրենիք վերադարձողները, ամէնաճիշդ քայլը առած կ՚ըլլան, եթէ մնան ու արմատներ նետեն: Եթէ կ՚ուզենք ոչ միայն որպէս սոսկ մահկանացուներ ապրիլ, այլեւ՝ հայօրէն ապրիլ, միակ փրկութեան լաստը Հայաստանն է:

# Մարդասիրական օգնություն սիրիացի ապաստանյալներին

Սիրիայում ընթացող իրադարձությունները շատ սիրիացիների ստիպեցին ժամանակավորապես լքել իրենց հայրենիքը: Մի քանի հազար փախստականներ ապաստան գտան Հայաստանում: Պետության կողմից իրականացվող միջոցառումներին զուգահեռ սիրիացի փախստականներին կենսական անհրաժեշտության պարագաներով՝ հագուստ, կենցաղային իրեր, հիգիենիկ պարագաներ, ջանադրաբար օգնության է հասնում նաեւ «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը, որը համագործակցում է ՄԱԿ ՓԳՀ-ի (UNHCR) հետ:

Բացի դրանից՝ «Առաքելություն Հայաստան»-ի աշխատակիցները դյուրացնում են սիրիացի փախստականների՝ առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունները եւ ապահովում նրանց անհրաժեշտ խորհրդատվությամբ: Հայաստանում Գերմանիայի դեսպանությունն աջակցում է «Առաքելություն Հայաստան» կազմակերպության գործունեությանը՝ Հայաստանում սիրիացի փախստականների համար կազմակերպվող մարդասիրական օգնության նպատակով տրամադրելով 20.000 եվրո: Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Ռայներ Մորելը եւ «Առաքելություն Հայաստան» կազմակերպության նախագահ Հռիփսիմե Կիրակոսյանը 2013 թ. մարտի 1-ին Գերմանիայի դեսպանությունում հանդիսավորապես ստորագրեցին աջակցության մասին պայմանագիրը:

# «Հուզականորեն գրավիչ» մի հուշակոթող Փասադենայում



Փասադենայից (Կալիֆոռնիա) Ջեյսոն Ուելսի հաղորդագրությունը տեղեկացնում է, որ տեղի «Հայկական ցեղասպանության հուշակոթողի հանձնախումբը», մանրակրկիտ քննելով քաղաքի «Հուշահամալիրների այգում» առաջիկայում տեղադրվելիք Հայոց ցեղասպանությունը բնութագրող հուշակոթողների մրցույթին ներկայացված 17 նախագծերը, լավագույնն է ճանաչել Արվեստի կենտրոնի դիզայնի քոլեջի ուսանողուհի Կեսրին Մենարի մտահղացումը:

Հանձնախումբը միաձայն «հուզականորեն գրավիչ» է որակել նրա նախագիծը, որի հիմնական առանձնահատկությունը երեք իրար վրա հենվող սյուներից ամենաբարձրից 3 վայրկյանը մեկ ջրի կաթիլի անկումն է մեջտեղում գտնվող փորագրված քարե ավազանի մեջ, խորհրդանշելով մեկ կորած կյանք: Մեկ տարվա ընթացքում 1,5 միլիոն «արցունք» է թափվելու՝ ներկայացնելով 1915-18 թվականներին կոտորված հայերի քանակը:

Հուշակոթողը պատրաստ է լինելու մինչեւ 2015-ի ապրիլի 24-ը՝ Եղեռնի հարյուրամյակը: Առաջիկա ամիսներին հավաքվելու է համապատասխան բյուջե:

«Արցունքաբեր եռասյուն» կոթողի հեղինակ Մենարը 26 տարեկան է եւ խոստովանել է, որ սկզբնական շրջանում իրեն անարժան է համարել նման գործ նախաձեռնելու համար: «Բայց արվեստը ստիպում է խորանալ մարդկային փորձառության ամենախոր ու ամենամութ կողմերի մեջ եւ առաջացնել կարեկցանք ու իրարհասկացողություն: Ես ցանկացա մաս դառնալ այդ ողբերգության եւ գեղեցիկ ու հիշարժան մի բան հորինել», ասել է նա՝ ավելացնելով, որ չափազանց ոգեւորված է աշխատել եւ մշակած երեք գաղափարներից ընտրել է այս մեկը:

Հանձնախմբի նախագահ Ուիլյամ Փափարյանը (Փասադենայի նախկին քաղաքապետ, մասնագիտությամբ՝ իրավաբան) նշել է, որ իրենք «խորապես տպավորված» են եղել Մենարի աշխատանքով:

Հ. Ծ.

## Գյուղատնտեսություն

# Գյուղոլորտ. իրական բարեփոխումներից մինչեւ... գյուղնախարարության լուծարում

ՀՀ բարձրագույն ղեկավարության մեջ ամրագրված մի մոտեցում կա. պաշտոն ստացող յուրաքանչյուր ոք հարկ է համարում ընդգծել, որ իր ստանձնած կառույցում մասնագիտական գերազանց ներուժ կա եւ իր նպատակն է լավագույնս ուղղորդել այն պետական խնդիրների կատարմանը: Բայց արի ու տես, ասենք, հանրության հիմնական ուշադրության կենտրոնում գտնվող ՀՀ նախարարությունների պարագայում, տարիներն անցնում են, դրանց աշխատակազմերի պայմանները բարելավվում, արտերկրներ ուղեւորություններն ավելանում, իսկ ցանկալի արդյունք կամ դրան մոտեցող վիճակ չի ապահովվում: Եվ մեր մարդիկ, որոնք հույսի էին տրվել, չխոսելով լավատեսության մասին, հուսալքություն են ապրում, նեղսրտում ու անտարբեր դառնում, մի մասն էլ երկրից թողնում հեռանում: Մոտեցումս խիստ գնահատողների համար փորձեմ հետագա ասելիքս հիմնավորել մերօրյա փաստարկումներով:

Մեզանում մտայնություն կա, որ մեր երկիրը պարենային ապահովության ու անվտանգության առումով խնդրահարույց է, կապված հողային կարողունակության հետ, որը մեր պաշտոնական եւ մասնագիտական միտքը ամփոփում է Հայաստան երկիրը սակավահող հռչակելով: Նման մոտեցման հեղինակներն իրենց նեղություն չեն տալիս պարզելու, թե ինչպես են այսօրինակ պարագայում գործում Հայաստանից շատ առավել անբարենպաստ, սակայն բարեկեցիկության առավելագույն մակարդակում ապրող երկրները, ասենք՝ Բելգիան, որը մեր տարածքն ունի, փոխարենը՝ 10 մլն լավագույնս սնվող բնակչություն: Տողերիս հեղինակը այլեւայլ տեղեկատվությանը զուգահեռ ծանոթացավ «Հայկական սովետական հանրագիտարանի» 2-րդ հատորում տեղադրված Բելգիային նվիրված նյութին: Առաջին իսկ վայրկյանից տարօրինակ մի փաստ է նշված. երկրի գյուղատնտեսական հողատարածության 2/3-ը հատկացվում է կերային կուլտուրաների մշակմանը, պարզ ասած՝ անասնակերին: Իսկ ո՞ւր մնաց պարենային ցորենը, Բելգիայի հարգելի կառավարիչներ. չէ՞ որ ինչքան էլ հացի սպառումը քիչ լինի, այդուհանդերձ կա, գումարած մակարոնեղենի ու հրուշակեղենի համար պահանջվող ալյուրի քանակը: Կասկած բան չէ 10 մլն մարդկանց անգամ նվազագույն պահանջները բավարարելը, որի համար մի քանի մլն տոննա հացահատիկի արտադրություն է անհրաժեշտ, որը դուք անասնակերով եք փոխարինել:

Համաշխարհային այսօրինակ տեղեկատվությանը ծանոթանալով պարզվում է, որ այս ուղղությամբ առաջնորդվել են տասնամյակներ առաջ Բելգիայում եւ մինչեւ մեր օրերն իրենց պարենային ապահովությունը առավելագույնս կարգավորած տասնյակ երկրներում, որոնց շարքում է, ասենք, մերոնց որակմամբ սակավահող, երբեմնի խնդրահարույց Չինաստանը: Հարցն այն է, որ ամենուր, երկիրը հողազուրկ լինի թե ցրտաշունչ, փոքր թե մեծ, խնդիր է համարվում կենդանական ծագման սննդամթերքների ու դրանց հումքի արտադրությունը, ուր որոշիչ պայման է գործընթացը երաշխավորող խոշոր կաթնամսատու անասնատեսակների որոշակի գլխաքանակի լիարժեք կերակրումը: Այս պարզ գործընթացի իրականացումը հանրությանն ապահովում է առաջնահերթ համարվող կաթնամսամթերքներով, որոնց բավարար քանակի ու որակի սպառումն էլ բարեբեր հանրային միջավայր է ստեղծում: Մերօրյա միակուսակցական Չինաստանը կարծես ասվածի օրինակ է: Ահա սա է, որ չունի նորանկախ Հայաստանը եւ գյուղոլորտում իրականացվող այսօրվա գործընթացների հետեւանքով չի էլ ունենա մեզանում տիրապետող մտայնության պատճառով: Ասվածը հիմնավորելու համար հարկ է ընդամենը ծանոթանալ ՀՀ պարենային ապահովության ու անվտանգության համար պատասխանատու ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործունեությանը: «ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն» անվանումով մի փաստաթուղթ ՀՀ կառավարությունը հաստատել է 2004-2015 թթ. համար. տարիներն անցել են, իսկ մեր առեւտրային ցանցի առաջարկներում գրեթե ոչինչ չի փոխվել, երշիկեղենի ու մսատեսակների, կաթնամթերքների, բուսական ու կենդանական յուղերի, հատիկաընդեղենի, ալյուրից արտադրատեսակների, մի խոսքով՝ մեր սպառած սննդատեսակների գերակշիռ մասը կամ արտասահմանյան ծագման են, կամ ներկրված հումքից պատրաստված: Եվ հարցը, թե ինչո՞ւ, հնչում է ինքնաբերաբար: Ինչու՞ պարոնայք. հայ հանրությունը հավաստա՞ այն լուրերին, ըստ որոնց այս վիճակն ստեղծվում է ներկրողների շահերը սպասարկելու նպատակով, որոնք հեռավոր երկրներից Հայաստան հասցված մթերքները ու դրանց վերամշակումները տեղականի համեմատ կես գնով վաճառելով անգամ կրկնակի շահ են ստանում: Ինչո՞ւ այս հնարավորությունը չի ստեղծվում հայ անասնապահի համար, փոխարենն առաջնահերթ է համարվում խաղողի ու բանջարաբուսանային մշակաբույսերի խթանումը, ինչ է թե մի քանի վերամշակողների արտադրածը արտերկրներ ուղարկվեն: Չէ՞ որ զավեշտ է այն հայտարարությունը, թե ՀՀ գյուղոլորտն ապահովում է երկրին անհրաժեշտ պարենամթերքների զգալի մասը, անգամ 80 տոկոսը. այս պարագայում ինչո՞ւ է հայ գյուղացին ընչազուրկ վիճակում, զրկված իր գործն ունենալու նվազագույն հնարավորությունից: Խաղողագործության ավանդույթներ ունեցող երկրներում 1-2 հա այգի ունենալը բավարար է, որ խաղողագործն իր ընտանեկան գինին արտադրի, մատչելի գնով տեղում վաճառի, ժամանակի ընթացքում էլ համաշխարհային շուկա դուրս գա: Ավստրիայում մի գյուղական համարվող, 150 նստատեղով ընտանեկան ռեստորանում եմ եղել, ուր մատուցվածը հիմնականում սեփական տնտեսության արտադրանքն էր, բացառությամբ սուրճի ու արեւադարձային պտուղների, որոնք այդ երկրում չեն աճում: Ուրեմն ինչո՞վ են արդարացված մեզանում փոքր ու միջին գործարարությունը խթանելու իշխանական հայտարարությունները, երբ զուգահեռաբար կառուցվում են գերհզոր երկրներին հատուկ վերամշակող գործարաններ, որոնք ուղղակի խժռում են հայ հողագործի ստեղծած նվազագույն բարիքները: Ամանորի նախօրեին խոշոր եղջերավորի հարկադիր սպանդ իրականացվեց անասուններին ձմռանն անհրաժեշտ կերի բացակայության պատճառով, եւ մսի գնի թանկացում չարձանագրվեց: Սակայն գլխաքանակի նվազումը զգալ կտա առաջիկայում: Մեզանում որեւէ հիմնավոր բացատրություն չունի խոզի մսի գինը, որը արտերկրներից ներմուծվածի գրեթե կրկնակին է: Ինչո՞վ է արդարացված մեր շատ ու շատ պաշտոնյաների աշխատանքը, երբ Չինաստան կատարած բազմաթիվ այցելություններում տեսնելով տեղական մսամթերքներով ապահովվածության չինական իրողությունը, դրանք չեն փորձում մեր երկրում արմատավորել: Փաստ է, չէ՞, որ աշխարհում վերջին տարիներից յուրաքանչյուրում արտադրվող 100 մլն տոննա խոզի մսի 50 մլն տոննան չինական ծագում ունի, հայաստանցիներս էլ այդ մսատեսակի հանդեպ անտարբեր չենք, ասել է թե իրացման խնդիր չկա: Արդեն հիշատակված «Ռազմավարությունում» 2010 թ. խոզի մսի արտադրություն նախատեսված էր 20 հազար տոննա, հազիվ ապահովվել է 7 հազար տոննա: Միջանկյալ 2010 թ. համար կանխատեսված 690 հազար գլուխ խոշոր եղջերավորի ու 185 հազար խոզի դիմաց 2012-ի հունվարի 1-ի դրությամբ այս անասնատեսակների գլխաքանակը համապատասխանաբար եղել է 600 հազար եւ 115 հազար, երբ իրական պահանջը դրանց կրկնակին է: Կանխատեսված 1,3 մլն մանր եղջերավորի դիմաց հազիվ 600 հազար ոչխար կա:

Այս օրերին հնչող այլեւայլ կարգախոսներն այսօրինակ տնտեսական խնդիրների առկայության պարագայում որեւէ ոգեւորություն չեն ստեղծում: Չէ՞ որ այս վիճակը կարելի էր գոնե մասամբ բարեփոխել, գյուղացուն շարունակական աշխատանքի տեր դարձնել, արտերկրներ մեկնած մեր մարդկանց ուղարկած գումարները երկրում շրջանառել, նպաստել գյուղի իրական բարեփոխմանն ու գյուղաբնակին հույս ներշնչել, այդկերպ իրականացնել իրական բարեփոխումներ ու կանխել գյուղնախարարությունը լուծարված տեսնելու որոշ շահառուների մտայնությունը:



**Հ. Գ.** Սույն մտորումները շաբաթներ առաջ էի թղթին հանձնել: Այս ընթացքում ՀՀ կառավարությունը 2013 թ. համար հաստատեց հողօգտագործողներին աջակցություն ցուցաբերելու եւ սերմացուի պահանջարկը բավարարելու 700 մլն դրամ արժողությամբ ծրագիր՝ «Տնտեսական կառուցվածքային բարեփոխման աջակցություն» միջոցառման շրջանակում: Խոսքն ընդամենը հողօգտագործողների անզորության պատճառով չմշակվող վարելահողերում հիմնականում խոտատեսակներ առվույտի ու կորնգանի սերմերի տրամադրման մասին է: Թե ՀՀ գյուղնախի մասնագետները որ երկրի օրինակով են վարելահողերը խոտի աճեցման տարածքների վերածում, անհայտ է: Կայացած գյուղոլորտ ունեցող երկրները հողերն օգտագործում են խոտի համեմատ բազմակի արդյունավետություն ապահովող մշակաբույսերի աճեցման նպատակով, որն էլ հավելյալ արժեք է ապահովում: Այնպես որ դեռեւս ուշ չէ հետեւել համաշխարհային գործընթացներին, ՀՀ վարելահողերը խոտհարքների չվերածել, հողօգտագործողներին էլ հերթական փորձության չենթարկել: ՀՀ տարածքի մոտ 30 տոկոսը կազմող 840 հազար հա խոտհարքների ու արոտավայրերի իրական արժեքը վերջերս մասամբ տվեց հարեւան երկրի դեսպանը: Մեր մասնագետների լռությունը հարկ է համաձայնության ապացույց համարել: Եվ հարցը՝ ինչո՞ւ առավել արդյունավետությամբ չենք առաջնորդվում, հնչում է ինքնաբերաբար:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
**2006-2008 թթ. ՀՀ գյուղնախարարի խորհրդական**

# Հունվարին անշարժ գույքի գները՝ առանց էական փոփոխությունների

*1-ին էջից*

**Մարզերում հունվարին վաճառվել են 302 բնակարաններ, որոնց քանակը դեկտեմբերի համեմատ նվազել է 7,1 տոկոսով, իսկ 2012-ի հունվարի համեմատ՝ 23,7 տոկոսով: Բնակարանների միջին գները մարզերում հունվարին դեկտեմբերի համեմատ աճել են 0,5 տոկոսով:**

**Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները հունվարին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 292 հազար դրամ: Աբովյանում եւ Վաղարշապատում (Էջմիածնում) 1 քմ գինը 153 հազար դրամ է կազմել: Ապա գալիս են Նոր Հաճընը՝ 128 հազար դրամ, Եղեգնաձորը եւ Արմավիրը՝ 119 հազար դրամ, Գորիսը՝ 117 հազար դրամ, Իջեւանը՝ 116 հազար դրամ, Աշտարակը՝ 114 հազար դրամ, Մասիսը՝ 112 հազար դրամ, Ջերմուկը՝ 110 հազար դրամ, Եղվարդը, Գյումրին, Դիլիջանը՝ 109 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:**

**2013-ի հունվարին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 312 գործարք, որից 85-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2013-ի հունվարին 2012-ի դեկտեմբերի համեմատ նվազել է 46,9 տոկոսով, իսկ մարզերում՝ 41,5 տոկոսով:**

**Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2013-ի հունվարին դեկտեմբերի համեմատ աճել են 0,2 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.**

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | հունվար 2012 թ. | հունվար 2013 թ. | դեկտեմբեր 2012 թ. |
| Կենտրոն | 459800 | 471100 | 470700 |
| Արաբկիր | 370100 | 378100 | 377400 |
| Քանաքեռ-Զեյթուն | 275000 | 291100 | 290000 |
| Նորք-Մարաշ | 302000 | 314000 | 313700 |
| Ավան | 249100 | 267050 | 266800 |
| Էրեբունի | 219800 | 235000 | 234400 |
| Շենգավիթ | 239500 | 251000 | 250600 |
| Դավթաշեն | 258000 | 271700 | 271100 |
| Աջափնյակ | 236800 | 244100 | 243800 |
| Մալաթիա Սեբաստիա | 220500 | 234300 | 234300 |
| Նուբարաշեն | 144800 | 147600 | 147300 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 270500 | 282300 | 281800 |

**Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները հունվարին դեկտեմբերի համեմատ աճել են 0,3 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո դարձյալ Ծաղկաձորում են, 1 քմ-ն՝ 305 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է, 1 քմ-ն՝ 154 հազար դրամ, երրորդը՝ Վաղարշապատը, որտեղ 1 քմ-ն կազմել է 153 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 135 հազար դրամ, Նոր Հաճընը, Գորիսը՝ 129 հազար դրամ, Իջեւանը՝ 122 հազար դրամ, Բյուրեղավանը՝ 120 հազար դրամ, Գյումրին՝ 118 հազար դրամ 1 քմ դիմաց:**

**Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2013-ի հունվարին 2012-ի հունվարի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 14,9 տոկոսով, աճուրդով վաճառքներինը աճել 2,6 անգամ, Երեւանում՝ 8 տոկոսով:**

**2013-ի հունվարին 2012-ի դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 29,1 տոկոսով, իսկ 2012-ի հունվարի համեմատ՝ 19,7 տոկոսով:**

**Իրականացվել են հիփոթեքային գրավադրման 69 գործարքներ, որից 42-ը՝ Երեւանում: 2012-ի դեկտեմբերի համեմատ, Հայաստանում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 66,7 տոկոսով, այդ թվում Երեւանում՝ 70,2 տոկոսով, իսկ մարզերում՝ 59,1 տոկոսով: 2012-ի հունվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 3,5 անգամ, ընդ որում, Երեւանում՝ 3,2 անգամ, իսկ մարզերում՝ 3,9 անգամ:**

**Այսպիսով, Հայաստանի անշարժ գույքի գները մնացել են առանց էական փոփոխությունների, իսկ գործարքների քանակը նվազել է, ինչը բնորոշ է տնտեսական ցածր ակտիվություն ունեցող հունվար ամսվա համար:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ԱԶԳ **Միջազգային**

# «Թուրքիայում 70 հազար քրիստոնյա է մնացել»

## *«Մինչդեռ 1915-ից առաջ յուրաքանչյուր 9-րդ բնակիչ քրիստոնյա էր»*

«**Ազգի**» փետրվարի 28-ի համարում «Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հանդիպում Անկարայում» վերնագրով հրապարակման մեջ նշել էինք, որ դա անցկացվել է փետրվարի 25-ին վարչապետ Էրդողանի գրասենյակում, ներկայությամբ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի:

Հանդիպմանը մասնակցել են Անկարայի մուֆթին, Հույն ուղղափառ եկեղեցու տիեզերական պատրիարքը, Կ. Պոլսո հայոց պատրիարքի տեղապահը, Թուրքիայում հրեաների գլխավոր ռաբբին, ասորական Մար Գաբրիել վանքի մետրոպոլիտը, Թուրքիայի կաթոլիկ ասորիների պատրիարքի փոխանորդը, Թուրքիայի բողոքական եկեղեցիների միության խորհրդի ներկայացուցիչը:

Հանդիպմանը ներկա չեն եղել ալավիները: Քանի որ Անկարայի մուֆթին սուննի է, իսկ ալավիները՝ շիա, ուստի մահմեդականներն այստեղ կիսատ են ներկայացել: Այլ կերպ, Թուրքիան առ այսօր համառում է որպես կրոնական խմբավորում ճանաչել ալավիներին, որքան էլ նրանք շուրջ 20 միլիոնի հասնող բնակչությամբ լինեն երկրի խոշորագույն համայնքը այդ խմբավորումների մեջ:

«Հայթերթում» ինչպես հանդիպմանն ու ալավիների բացակայությանը, այնպես էլ Եվրոմիության գծով նախարար Էգեմեն Բաղըշի վերջին ամբարտավանություններին է անդրադարձել Ջեյնեփ Թոզդումանը: Ահա թե ինչ է գրել հեղինակը. «Թուրաբդինը առյուծների օրրանն է, աղվեսներն այստեղ մտնել չեն կարող» վերնագրով հոդվածում.

«Այս հոդվածում ուզում եմ անդրադառնալ ասորի ժողովրդին վշացնող երկու դեմքին: Եթե հիշում եք, հունվարի 16-ին ԵՄ-ի գծով նախարար Էգեմեն Բաղըշը Ստոկհոլմի թուրքական հյուպատոսարանում հանդիպել եւ անարգել էր ասորի ժողովրդի ներկայացուցիչներին: Ակնարկելով Շվեյցարիայի խորհրդարանում 1915-ի ասորիների ցեղասպանության ճանաչման մասին, նախարար Բաղըշն ասել էր. «Եվրոպայում եւ Շվեդիայում զբաղվում եք Սեյֆոյի (1915-ի ասորական ցեղասպանություն) ճանաչման երազախաբությամբ: Շվեդիան, որ ճանաչեց, մի բանի հասա՞ք»: Իրականում, պարոնայք, երազախաբությամբ դուք եք զբաղվում, ժխտելով ասորիների ջարդը: Էլ ինչպես անվանել շվեդական խորհրդարանի անդամ, ասորի Յըլմազ Քերիմոյին այլ երկրում հայրենիքից կիլոմետրերով հեռու սաստելու արարքը: Թե նախարարը հասկացնում էր. «Արտերկրում խելոք կմնաք, այլապես հայրենի երկրի երեսը չեք տեսնի եւ ես ձեր գլխին կփլեմ ասորական բոլոր վանքերը»:

Նախարարին անվայել, անամոթության դրսեւորում հանդիսացող այս խոսքերը ոչ այլ ինչ են, քան մեր երկրում թվաքանակը 18 հազարի կրճատված ասորիներին իրենց 6-հազարամյա հայրենիքից վտարելու նկրտում:

Երկրորդ դեմքը, որ ուզում եմ ուշադրության ներկայացնել՝ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի՝ վարչապետ Էրդողանի ուղեկցությամբ դռնփակ հանդիպումն էր Թուրքիայի կրոնական համայնքների ներկայացուցիչների հետ, որի վրա իր կնիքն է թողել Մար Գաբրիել վանքի մետրոպոլիտը: Ալավիներին՝ 20-միլիոնանոց համայնքին, հանդիպմանը գիտակցաբար չէին հրավիրել:

Մետրոպոլիտ Սամուել Աքթաշը, հրավիրելով այնտեղ երկու վարչապետների ուշադրությունը Մար Գաբրիել վանքի վրա, պահանջել է լուծել առգրավված վանքապատկան կալվածքի հարցը: Նա այս երկրում անընդհատ հալածվող քրիստոնյա հոգեւորականներից մեկն է միայն: Այնքան է զզվել հալածանքներից, որ իր 80 տարվա կյանքն այս վանքում անցկացրած մետրոպոլիտն ընդվզել է վերջապես: Գուցե ցանկացել է իրազեկել Գերմանիայի կանցլերին այն հալածանքների մասին, որը շարունակում է կրել ասորի ժողովուրդը: Չէ՞ որ 1600 տարվա պատմություն ունեցող այդ վանքն ասորական է, դրա վերադարձը բուն տերերին՝ ավելին քան բնական:

Ցավոք, այս երկրում ասորիներին, ինչպես հայերին ու եզդիներին, բաժին է հասել նռնենին, եւ նրանք նռան հատիկի պես սփռվել են աշխարհով մեկ:

Անընդհատ հարված են ստանում: Մի օր Սամաթիայում հայերին, հաջորդ օրը Մար Գաբրիել վանքի միջոցով ասորիներին, հետո ալավիներին, իսկ վերջին 30 տարիներին էլ քրդերին են հարվածում: Միեւնույնն է, դուք ոչնչանալու եք հարվածելով, իսկ մենք հարվածների տակ աճելու ենք: Մշտական կոտորածների, հալածանքների, ճնշումների հետեւանքով քրիստոնյաների թիվը այս երկրում կրճատվել է 70 հազարի: Մինչդեռ, 1915-ից առաջ յուրաքանչյուր 9-րդ բնակիչ քրիստոնյա էր: Մենք՝ ասորի ժողովրդի բարեկամներս, պայքարելու ենք, որ Մար Գաբրիել վանքը հանձնվի բուն տերերին եւ թույլ չենք տալու աղվեսներին ներթափանցել առյուծների օրրանը»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Թուրքերը հանո՞ւն, թե՞ ընդդեմ Իլհամ Ալիեւի են գործում

Թուրքական ոստիկանությունը Ստամբուլում ձերբակալել է Սելջուկ Չաղլիան անունով մեկին: Ձերբակալությունը կատարվել է նրա բնակարանում, վաղ առավոտյան: Սա այն անձնավորությունն է, որը Ստամբուլում դիմավորել է Ադրբեջանի Միլլի մեջլիսի նախկին պատգամավոր Գյուլար Ահմեդովայի մտերմուհուն՝ Սեւինջ Բաբաեւային: Անցյալ տարեվերջին Բաբաեւան Ստամբուլի կլինիկաներից մեկում «մահացել է սրտային անբավարարությունից»:

Նրա մահվան փաստով Ստամբուլ մեկնած ադրբեջանցի իրավապահներին թուրքական կողմը թույլ չի տվել խուզարկել հանգուցյալի բնակարանը: Թուրքական ոստիկանությունը հիմք է ընդունել հանգամանքը, որ մահացածը Թուրքիայի քաղաքացու անձնագիր է ունեցել եւ իրավաբանորեն հանդիսացել Մերիեմ Սոլմազ: Այդուհանդերձ, թուրքական իշխանությունները չեն արգելել, որ «Թուրքիայի քաղաքացի Մերիեմ Սոլմազի» դիակը տեղափոխվի եւ հողին հանձնվի Բաքվում, որտեղ, ինչպես իրազեկ աղբյուրներն են նշում, քաղաքացիական կացության ակտերի գրանցամատյանում մահը ձեւակերպվել է Սեւինջ Բաբաեւայի անունով:

Սելջուկ Չաղլահանի ձերբակալությունը, վստահաբար կարելի է ասել, կապված է Մերիեմ Սոլմազ- Սեւինջ Բաբաեւայի առեղծվածային մահվան հետ: Իսկ եթե ավելացնենք, որ Գյուլար Ահմեդովան երկամսյա կալանքի է վերցվել, ապա թերեւս հնարավոր է ինչ-որ կապ տեսնել նրա եւ Չաղլահանի միջեւ: Ավելի պարզ ասած, կասկածվում է, որ Սեւինջ Բաբաեւան թունավորվել է: Եվ դա տեղի է ունեցել Գյուլար Ահմեդովայի հրահանգով, իրականացնողն էլ եղել է Սելջուկ Չաղլահանը:

Ինտրիգը նրանում է, թե արդյո՞ք թուրքական կողմը գործում է ադրբեջանական իրավապահների հետ համաձայնությամբ, թե՞ ինքնուրույն: Եթե կողմերի միջեւ ամեն ինչ համաձայնեցված է, եւ Գյուլար Ահմեդովան պետք է դառնա քավության նոխազ, ապա Սելջուկ Չաղլահանի ձերբակալությունը պաշտոնական Բաքվին որեւէ անհանգստություն չպետք է պատճառի:

Բացառված չէ, սակայն, որ թուրքական ոստիկանությունը Չաղլահանին ձերբակալել է, որպեսզի «գյուլագեյթը» կոծկելու շանսից զրկի Իլհամ Ալիեւին: Չէ՞ որ եթե ապացուցվի, որ Սեւինջ Բաբաեւան «սպանվել է», եւ կազմակերպիչն է եղել Գյուլար Ահմեդովան, ապա շղթան կարող է ձգվել դեպի իշխանական բուրգի գագաթ:

Իսկ այնտեղ աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւն է, որին Բաքվի նախկին միջազգային համալսարանի նախկին ռեկտոր Աբդուլլաեւը մեղադրում է «մահվան էսկադրոն»-ներ ստեղծելու եւ ղեկավարելու մեջ: Երեկ Աբդուլլաեւը տարածել է հերթական տեսահոլովակը, որի հերոսը Իլհամ Ալիեւի անվտանգության ծառայության աշխատակից է: Նա Աբդուլլաեւի առեւանգված եղբորից «մի լուր բերելու» դիմաց 3000 դոլար է շորթում եւ տեղեկացնում, որ նա «գտնվում է Չեչնիայում»:

Նախագահի աշխատակազմի ղեկավար, նախագահի անվտանգության ծառայություն, Միլլի մեջլիսի պատգամավոր՝ բոլորը խառնված են կոռուպցիոն «պրոեկտ»-ներում: Եվ անսպասելիորեն գործին խառնվում է երկրորդ երկիրը: Որքան էլ թուրք-ադրբեջանական հարաբերությունները բարեկամական են, Անկարան կուզենար Բաքվի դեմ ունենալ կոմպրոմատ: Սելջուկ Չաղլահանի ձերբակալությամբ կարծես հնարավորությունը որոշակիանում է:

Վ. Ա.

«ՃԿՈՒՆ» ԲԱՆԱՁԵՎԵՐ

# Արեւմուտքը «ոչ մահաբեր» զենք կառաքի սիրիացի ապստամբներին



**Եվրոմիությունը վերացրել է «ոչ մահաբեր» զենքի, փոխադրամիջոցների եւ տեխնիկական սարքավորումների մատակարարման արգելքը՝ պայմանով, որ օգնությունը կօգտագործվի խաղաղ բնակիչների պաշտպանության համար: Այդ մասին հաղորդում է «Ռոյթեր» գործակալությունը:**

**Զինամատակարարման օրենքում կատարված փոփոխությունների համաձայն, մինչեւ հունիսի 1-ը Եվրոմիությունը վերացնում է «ոչ մահաբեր» զինատեսակների մատակարարման արգելքը (կոնկրետ զինատեսակները չեն նշվում): Բացի դրանից, սիրիական ընդդիմության Ազգային կոալիցիային կմատակարարվեն բալիստիկական պաշտպանության միջոցներ եւ կտրամադրվեն որոշ «այլ ծառայություններ»:**

**ԵՄ երկրները որոշումն ընդունել են մեկ շաբաթ տեւած բանակցություններից հետո:**

**Ավելի վաղ՝ փետրվարի 28-ին, ԱՄՆ-ը խոստացել էր սիրիական ընդդիմությանը հատկացնել 60 մլն դոլարի «ոչ մահաբեր օգնություն»: Օգնությունը կներառի Սիրիային պարենի ու դեղորայքի մատակարարումները, ինչպես նաեւ ապստամբների ձեռքին գտնվող տարածքների ենթակառույցի վերականգնումը:**

**Ամերիկացիների որոշումը մեկնաբանելիս սիրիական ընդդիմության ներկայացուցիչները հայտարարել են, որ իրենք հավանություն են տալիս այդ քայլին, բայց կարծում են, որ Սիրիայի իրադրությունը արմատապես կարող են փոխել միայն զենքի մատակարարումները:**

# Ֆրանսիայում Օլանդի վարկանիշն իջել է 30 տոկոսի



**Ֆրանսիայի մամուլը նախագահ Ֆրանսուա Օլանդին քննադատել է նրա մոսկովյան անարդյունք այցի եւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ փետրվարի 28-ին վարած բանակցությունների համար: Մոսկվայում Օլանդը Պուտինին շնորհակալություն էր հայտնել Մալիում ֆրանսիական զորքերի գործողություններին հավանություն տալու համար: Պուտինը մերժել էր Ռուսաստանում իրավախախտումների վերաբերյալ իրեն ուղղված կշտամբանքները: Բացի դրանից, կողմերը «ակտիվորեն բանավիճել» էին Սիրիայի խնդրի առնչությամբ, բայց փոխհամաձայնության չէին հանգել, մասնավորապես՝ Բաշար Ասադի հրաժարականի նպատակահարմարության հարցում:**

**L'Express շաբաթաթերթը Օլանդի մոսկովյան ուղեւորությունը համարում է միանգամայն ավելորդ: Ըստ երեւույթին, նա Մոսկվա մեկնեց «տարաձայնությունները հավաստելու եւ խուլերի երկխոսությունը վերսկսելու համար», կարծում է հանդեսը: Հատկանշական է, որ հենց բանակցությունների օրը Ֆրանսիայում հրապարակված հանրային հարցման արդյունքները ցույց տվեցին, որ Օլանդի վարկանիշը ամենացածրն է 1981 թվականից ի վեր երկրի նախագահների ունեցած վարկանիշների մեջ:**

**Ըստ L'Express-ի, Օլանդի այցելությունը սոսկ ինչ-որ չափով նպաստեց Ռուսաստանի մեկուսացվածության հաղթահարմանը: «Ի՞նչ իմաստ ունի հանդիպումը, եթե հետո մամուլի ներկայությամբ լոկ հավաստում ես, թե որքան տարբեր են կողմերի կարծիքները», հարց է տալիս հոդվածագիրը՝ հայտնի լրագրող Քրիստիան Մակարյանը: Նրա կարծիքով, նման դիվանագիտությունը չի բարելավում երկու երկրների հարաբերությունները եւ չի փոխում Մոսկվայի կոշտ դիրքորոշումը Սիրիայի հարցում:**

**Լրագրողին (եւ Ֆրանսիայից շատերին) զայրացրել է Պուտինի այն կատակը, թե Սիրիայի հարցում «առանց շշի անհնար է գլուխ հանել»: Պուտինն ասել էր. «Ինձ թվաց, որ այստեղ անհնար է անմիջապես գլուխ հանել առանց մեկ շիշ լավ գինու կամ օղու»: «Ավելի լավ է՝ մեկ շիշ Porto-ի», արձագանքել է Օլանդը:**

**Մակարյանը վրդովմունք է արտահայտում, որ «ժողովուրդներին ցավ պատճառող մարդկային ողբերգությունները» քննարկվում են նման կատակներով, «այն էլ՝ ոչ ծիծաղելի»: Նրա կարծիքով, Պուտինին բնորոշ կատակային տոնը լուրջ բանակցությունների ժամանակ ուրիշ քաղաքական գործիչների մասնակցության դեպքում թողնում է «շատ տհաճ տպավորություն»:**

**Օլանդի արտաքին ու ներքին քաղաքականությունից դժգոհ են ոչ միայն փորձագետներն ու լրատվամիջոցները, այլեւ շարքային ֆրանսիացիները: «Ֆիգարո» թերթի պատվերով TNS Sofres գործակալության անցկացրած հարցման արդյունքների համաձայն, նրա նախագահության 10 ամիսների ընթացքում արձանագրվել է վարկանիշի աննախադեպ անկում: Միայն փետրվարին նախագահի վարկանիշն իջել է 5 կետով եւ այժմ կազմում է 30 տոկոս: Ֆրանսիացիներն Օլանդին մեղադրում են մասնավորապես շարունակվող տնտեսական նահանջի, արտադրության կրճատման եւ գործազրկության աճի համար:**

Պ. Ք.

# Մարալ Տէր-Պօղոսեան կը հիացնէ իր երազային կաղոյս քաղաքի եւ բազմազգ մշակոյթի ստեղծագործութիւններով

Վերջերս Բէյրութի գեղարուեստի հեղինակաւոր «Ալուան» ցուցասրահին մէջ իր ստեղծագործութիւններով հանդէս եկաւ լիբանանահայ գեղանկարչութեան երիտասարդ եւ տաղանդաւոր ներկայացուցիչներէն Մարալ Տէր-Պօղոսեանը: Դուստրը հանրածանօթ քանդակագործուհի Կիւլէն եւ գեղանկարիչ Շահէ Տէր-Պօղոսեաններու: Ան ծնած է 1976 թուականին՝ Փարիզի մէջ: Այժմ կը դասախօսէ Լիբանանեան համալսարանի գեղարուեստի ինստիտուտին մէջ:

2001 թուականին յատուկ թոշակ ստացած է Մշակոյթի զարգացման միջազգային հիմնադրամէն (IFPC), UNESCO Aschberg Fund-էն եւ Վիեննայի կառավարութենէն որպէս Վիեննայի բնակչուհի-արուեստագիտուհի:

Առաջին անհատական ցուցահանդէսը տեղի կունենայ Բէյրութի գերմանական «Գէօթէ» հաստատութեան մէջ՝ 2002 թուականին: Յաջորդ տարի Մարալ Տէր Պօղոսեանի անհատական երկրորդ ցուցահանդէսը տեղի կունենայ Անթիլիասի Կիլիկեան թանգարանին մէջ՝ Արամ Ա. կաթողիկոսի հովանաւորութեամբ:

Երազային կաղոյս շղարշի տակ թաքնուած Բէյրութի երանգապնակի վարպետուհին, 2011 թուականին կը ներկայացնէ իր ստեղծագործութիւնները Թուզլայի մէջ՝ Բոսնիա-Հերցեգովինա, INTERB-IFEP XIV ցուցահանդէսի ընդմէջէն: Նախապէս ալ իր պաստառները գեղարուեստական հանրութեան եւ արուեստի քննադատներուն կը «հրամցուին» 2006-2008 Սըրսոքներու թանգարանի աշնանային սենեկային ցուցահանդէսներուն: Նաեւ՝ 2001-2005 թուականներուն երեք անգամ մասնակցած է Վիեննայի, ապա՝ Լիոնի ու Ժընեւի, Շարժայի (Դուբայ) գեղանկարչական աւանդական



միջոցառումներուն, արժանանալով ականաւոր մասնագէտներու գնահատականին: Մասնաւորապէս «Ինքնութիւններ» գեղանկարներու շարանին մէջ մասնագէտներ նկատած են, որ Մարալ քաղաքակրթութիւններու մշակոյթները կը հիւսէ՝ ինչպէս երկրաչափական արտայայտութիւններով գորգ մը...

«Գեղարուեստի մօտեցումս կ'արտացոլացնէ բազմամշակութային խաւերը ինքնութեանս: Բանաստեղծական մօտեցումով ստեղծագործութիւններս կ'արտայայտեմ մթնոլորտէ մը, ուր բազմաթիւ մշակոյթներ եւ աւանդոյթներ համատեղ կ'ապրին: Երբեմն անոնք կը միաձուլուին, ուրիշ անգամներ ալ կը հակադրուին: Երբեմն կ'ընդելուզուի կովկասեան եւ արեւելեան գորգերու մանրամասներով: Անոնք կը ներկայացուին հայկական եւ պարսկական մանրանկարչութեան պատկերներով: Մշակոյթները միահիւսուած են, ինչպէս որ գորգի մը գոյները իրարու...: Գորգերու եւ մանրանկարչութեան պատկերներու ներկայացումը քաղաքի տեսարանին վրայ՝ իմ արուեստս է ինքնութիւն տալու այս բնակելի տարածքին, որ կորսնցնելու վրայ է իր ինքնութիւնը...»,- կը բացատրէ գեղանկարչուհին:

Յոյսով ենք, որ ինչպէս Լիբանանի, այնպէս ալ արաբական աշխարհի ու միջազգային գեղարուեստի երկնակամարին վրայ Մարալ Տէր-Պօղոսեանի աստղը պիտի փայլի իր բոլոր երանգներով, ի փառս հայ գեղարուեստի դարաւոր աւանդոյթներուն:

ՀԱՄՕ ՄՈՍԿՈՓԵԱՆ
Բէյրութ

# Կինոկենտրոնի տնօրենը ամփոփեց 2012թ.

**2012-ը Ազգային կինոկենտրոնի համար շատ բարեհաջող էր, «Ազգին» տեղեկացրեց կինոկենտրոնի տնօրեն Գեւորգ Գեւորգյանը:**



«Բացի մեր պետական գործառույթից, որն է իրականացնել պետական աջակցությամբ իրականացվող ֆիլմերի արտադրությունը, մենք ոչ պետական միջոցներով մի շարք ծրագրեր իրականացրեցինք: Նշեմ, պետական աջակցությամբ նախատեսված բոլոր ֆիլմերը ժամանակին նկարահանվեցին»:

Գ. Գեւորգյանն ասաց, որ անցյալ տարի նկարահանել են գեղարվեստական, լիամետրաժ, կարճամետրաժ, մանկական, անիմացիոն ֆիլմեր, մոտավորապես 15-16, եւ այդքանն էլ ընթացքի մեջ են:

Անդրադառնալով այս տարվան, պրն Գեւորգյանն ասաց, որ ֆիլմ նկարահանելու համար ներկայացված հայտերը շատ-շատ են եղել՝ 50-ից ավելի. «Ուրախալի է, որ այսքան շատ հայտ են ներկայացնում, սակայն քանակի հետ խոստանն ավելանում է: Այժմ մեր անվանի ռեժիսորների հետ միասին երիտասարդ ռեժիսորներն էլ են ֆիլմեր նկարահանում, որն ուրախալի է»:

Այս տարվա ներկայացված 50 փաթեթներից պետական աջակցություն կստանա 19, որոնցից 7 կնկարահանվի այս տարի, մյուսները՝ հաջորդ: Եվս 11 փաթեթ, նվիրված Ցեղասպանությանը, առանձին փաթեթով ուղարկվել է մշակույթի նախարարություն, որպեսզի իրենց աջակցությամբ նկարահանվեն, նշեց Գեւորգյանը:

Կինոկենտրոնի տնօրենը վրդովված ասաց. «Շատերը կինոկենտրոն են ներկայացնում գեղարվեստական գիրք, կամ ով եղել չի եղել Արցախում, պատերազմի մասին հուշեր է գրում եւ ցանկանում է ֆիլմ նկարահանել»:

Անդրադառնալով միջազգային կինոփառատոների ազդեցությանը, Գ. Գեւորգյանն ընդգծեց, որ Կաննի կինոփառատոնն օգնում է, որպեսզի համատեղ արտադրությամբ ֆիլմեր նկարահանվեն, քանի որ պետական աջակցությունը շատ քիչ է:

Ի դեպ, Կաննում անցյալ տարի հայկական տաղավարը շատ աշխույժ եւ մարդաշատ է եղել: Տասը օրերի ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ կարեւոր եւ լուրջ հանդիպումներ, քննարկումներ միջազգային ճանաչում ունեցող դիստրիբյուտորական եւ պրոդյուսերական ընկերությունների, կինոֆոնդերի պատասխանատուների հետ:

Գ. Գեւորգյանն ուրախությամբ ընդգծեց, որ այսօր մենք արդեն մուլտֆիլմեր ենք նկարահանում. «Ունենք համատեղ մուլտարտադրության մի շարք օրինակներ»:

Ընդգծենք, որ Հայաստանի եւ Ֆրանսիայի կինոկենտրոնների միջեւ կնքվեց համագործակցության ծրագիր, ինչը հնարավորություն կընձեռի հայկական կինոնախագծերի համար համաֆինանսավորման աղբյուրներ գտնելու, որոնց կինոմասնագիտությունների գծով կրթական ծրագրեր իրականացնելու:

Հայաստանը դարձել է նաեւ Եվրոմիության տեսալսողական օբսերվատորիայի անդամ: Եվրոպական այս կարեւոր կառույցին Հայաստանի անդամակցության մասին հայտարարվել է Ստրասբուրգում: Մեր կինոարտադրության համար շատ կարեւոր է «Եվրո-Մաժ»-ի անդամ դառնալը, որի առթիվ Գ. Գեւորգյանը «Ազգին» տեղեկացրեց. «Եվրո-Մաժ»-ի անդամակցությունը շատ մեծ հնարավորություններ է տալիս: Բարդությունն այն է, որ յուրաքանչյուր պետություն պետք է անդամակցության համար 150 հազար եվրո անդամավճար մուծի: Բայց ես բանակցություններ եմ վարել, որ առայժմ Հայաստանը կես գնով ընդգրկվի այդ կառույցում»:

2012թ. կինոկենտրոնի «Կինոֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններ» ծրագրով վերականգնվել է երկու ֆիլմ՝ «Երեւանյան օրերի խրոնիկան» եւ «Սպրեցեք երկար» ֆիլմերը:

Կինոկենտրոնն անցյալ տարի մասնակցել է հետեւյալ փառատոներին՝ Մինսկի միջազգային, ԱՄՆ-ի Տեխաս նահանգի Աուստին քաղաքում «Քրիստոնեական», Սիեթլի միջազգային, Ֆրանսիայի Աննեսի քաղաքում կայացած միջազգային անիմացիոն, Մոսկվայի 34-րդ միջազգային եւ էլի մի շարք փառատոների:

2012թ. Հայաստանի ազգային կինոկենտրոնի եւ ռուսահայ RUSCICO դիստրիբյուտորական ընկերության միջեւ կնքվեց համագործակցության պայմանագիր, որով արդեն սկսվել են հայկական դասական ֆիլմերի վերականգնման, թվայնացման եւ համաշխարհային տարածաբաշխման աշխատանքները:

Կինոկենտրոնի կարեւոր նախաձեռնություններից էր նոր տարբերակի՝ «Կինոաշխարհ» ամսաթերթի հրատարակումը, որը հնարավորություն է տալիս ընթերցողին ծանոթանալու ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան կինոաշխարհում կատարվող իրադարձություններին: Շուտով թերթը կունենա նաեւ պաշտոնական կայք:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ



# «Պատմաբանները հաճախ են կաշառվում, պատմությունը՝ երբեք»

Այս տարի՝ 2013 թ. օգոստոսի 29-ին լրանում է Գարեգին Նժդեհի մասունքները հայրենիք բերելու եւ մայր հողին հանձնելու 30-ամյակը:

Մասունքներն ամփոփելու վայրերը՝ Խուստուփ լեռան ստորոտում Կոզն աղբյուրի մոտ, Գլաձորի Սպիտակավոր վանքը, իսկ ավելի ուշ Կապան քաղաքում կառուցված հուշահամալիրը, դարձել են ուխտատեղիներ:

Ուխտագնացության օրերն են հունիսի 17-ը՝ Գլաձորի Սպիտակավոր վանք, հոկտեմբերի 7-ը՝ Խուստուփ: Աճյունի տեղափոխման, հողին հանձնելու եւ ուխտագնացությունների մասին օրագրային մանրամասնությունները, ամենայն մանրամասնությամբ հրապարակված են լուսահոգի Արցախ Բունիաթյանի «Նժդեհի վերադարձը» գրքում:

Ավելի քան 25 տարի է, ինչ ուխտագնացների մի մասը հունիսի 16-ին հավաքվում է Սպիտակավոր վանքի մոտ: Գիշերում: Գիշերը 00:00 ժամին մտնում են վանք, աղոթում, հոգեւոր երգեր երգում, մոմ վառում եւ հավաքվում կրակի շուրջը: Հաջորդ օրը՝ հունիսի 17-ին, ժամը 13-ին նորից մտնում են վանք, որից հետո հավաքվում Նժդեհի շիրիմի մոտ, խնկարկում, մոմ վառում, շատերն իրենց սրտի խոսքն են ասում եւ ցրվում:

Հոկտեմբերի 6-ին դարձյալ ուխտավորների մի մասը հավաքվում է Խուստուփ լեռան լանջին՝ Կոզն աղբյուրի մոտ, անկախ եղանակային պայմաններից, խարույկ վառում: Իսկ ճիշտ գիշերվա 00:00 ժամին հավաքվում են հուշաքարի մոտ, մոմ վառում, աղոթում, երգում... Շատերը ողջ գիշերն անցկացնում են խարույկի մոտ, մի մասը վրաններում կամ ով ինչպես կարող է: Հոկտեմբերի 7-ին, ժամը 12:00-ին նորից հավաքվում են հուշաքարի մոտ:

Ամեն ուխտագնացության ավարտից առաջ բոլորը կրկնում են Արցախ Բունիաթյանի երդումը՝ «Եթե չգամ, իմացի՛ր չկամ»:

Ուխտագնացներս այսպես ենք ոգեկոչում մեծ հայ, նահատակ Գարեգին Նժդեհի անմահ հիշատակը:

Բայց ահա թե ինչպես է ներկայացնում մասունքների տեղափոխման մտահղացումը հարգարժան պատմաբան, ազգային եւ հանրային գործիչ Ռաֆայել Համբարձումյանը իր «Գարեգին Նժդեհ, ամողջական կենսագրութիւն» գրքի 443-րդ էջում:

«Հայ մտաւորականների մի խումբ (Գուրգեն Արմաղանեան, ուրարտագէտ Մարգոյ Իսրայելեան, պրոֆ. Վարագ Առաքելեան) 1980-ական թթ. սկզբին պատմաբան, ազգային բազմարդիւն, բայց շատ համեստ գործիչ Նիկոլ Կարապետեանի մտայղացումով ու նախաձեռնութեամբ որոշում են Նժդեհի աճիւնը բերել հայրենիք: ... 1987 թ. սկսած աճիւնը դառնում է ուխտատեղի»:

Երկար ժամանակ ծախսեցինք, փորփրեցինք մեր հիշողությունները, օրագրերը նորից թերթեցինք, սակայն ոչ մի հետք չգտանք ուրարտագետի մասնակցության մասին: Բացի պրոֆ. Վարագ Առաքելյանից, Մարգո Իսրայելյանի հետ ոչ ոք ծանոթ չի եղել, իսկ եթե հանգուցյալ պրոֆեսորն է հայտնել նրան կամ տեղյակ պահել, մեզ ոչինչ հայտնի չէ: Պրոֆեսորն այնքան զգուշավոր էր, որ ուղիղ 4 տարի իր տանը պահված մասունքների մասին կինն անգամ չի իմացել:

Միանգամից նշենք նաեւ, որ հարգարժան Նիկոլ Կարապետյանը մեկ տարի առաջ 1982 թ. արդեն մահացել էր: Եվս մեկ այլ դրվագ կապված Նիկոլ Կարապետյանի հետ: 1979 թ.-ին, երբ նա ցույց տվեց Արամ Մանուկյանի գերեզմանի տեղը Թոխմախի գերեզմանատանն ու հենց գերեզմանի մոտ բարձրաձայն ասվեց, որ այստեղ անպայման պետք է խաչքար դնել (ի դեպ, խաչքարը տեղադրվեց 1982 թ. օգոստոսի 11-ին), նա խիստ ու վճռական տոնով ասաց. «Չի կարելի, այստեղ ուխտատեղի կդառնա, եւ ԿԳԲ-ն կսկսի մարդաորսը, ափսոս է մեր երիտասարդությունը, դեռ ժամանակը չի»:

Արդյոք այդքան արագ փոխվե՞ց եւ կյանքի վերջին օրերին որոշեց երիտասարդությանն այդ վտանգավոր քայլի՞ն մղելու: Չի բացառվում...

Մեզ հարեւան հորջորջվող «պատմաբանները» նույնիսկ ինչ-որ տեղ ստիպված են կեղծելու, նենգափոխելու, հորինելու պատմությունը, որովհետեւ միայն այդ ճանապարհով կարող են փորձել սեփականացնելու մեր երկիրը, մեր մշակույթը, մեր հայրենիքը: Նրանք չեն խնայում իրենց մի թեյի գդալ սեւ իկրան այլազգի պատմաբաններին կաշառելու համար:

Մենք չկարողացանք գտնել պատմաբան, ազգային եւ հանրային գործիչ Ռ. Համբարձումյանի հորինվածքի աղբյուրները եւ նպատակները:

Մենք՝ «հայ մտավորականների մի խումբ» եւ մյուս ուխտավորները, ուրախ ենք նժդեհյան սուրբ մասունքների հայրենիքում գտնվելու եւ մեր ուխտագնացությունների համար:

Իսկ հարգարժան պատմաբանն էլ թող ուրախանա իր հորինվածքներով ու փաստերը կեղծելով:

*Հայ մտավորականների մի խումբ*

# Լեւոն Արոնյանն իր վարկանիշով աշխարհում մնում է 3-րդը

ՖԻԴԵ-ն հրապարակել է շախմատիստների դասակարգման նոր ցուցակը, որում նախորդ ամսվա համեմատ փոփոխությունները աննշան են: Լեւոն Արոնյանը պահպանել է 2809 վարկանիշը եւ 3-րդ հորիզոնականը: Լավագույն տասնյակում տեղ զբաղեցրած շախմատիստներից միայն աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդի վարկանիշն է փոփոխվել՝ աճելով 4-ով:



Դասակարգման ցուցակը 2872 ռեկորդային վարկանիշով շարունակում է գլխավորել Մագնուս Կառլսենը: 2-րդ տեղում Վլադիմիր Կրամնիկն է (2810): 4-րդ հորիզոնականը զբաղեցնում է Թեյմուր Ռաջաբովը (2793), որին հաջորդում են Սերգեյ Կարյակինը (2786), Վիշվանաթան Անանդը (2784), Վեսելին Թոփալովը (2771), Հիկարու Նակամուրան (2767), Շահրիյար Մամեդյարովը (2766) եւ Ալեքսանդր Գրիշչուկը (2764):

100 ուժեղագույն շախմատիստների ցանկում ընդգրկված են եւս 5 հայ շախմատիստներ: Արոնյանից հետո լավագույն ցուցանիշն ունի Վլադիմիր Հակոբյանը, որը 2704 վարկանիշով պահպանել է 45-րդ տեղը: Սերգեյ Մովսիսյանը թեեւ պահպանել է վարկանիշը (2695), սակայն 54-րդ տեղից նահանջել է 60-րդ հորիզոնական: Իսկ ահա Գաբրիել Սարգսյանը պահպանելով վարկանիշը (2666), 80-րդ տեղից բարձրացել է 78-րդ հորիզոնական: Մեկ հորիզոնականով բարձրացել է վարկանիշը (2663) պահպանած Տիգրան Պետրոսյանը, որը 81-րդն է: Տիգրան Ղարամյանը վարկանիշը (2660) նվազեցրել է 1-ով, սակայն պահպանել է 84-րդ տեղը:

Կանանց վարկանիշային ցուցակի առաջատարը Յուդիթ Պոլգարն է՝ 2696: Լավագույն տասնյակում են նաեւ Հոու Յիֆանը (2617), Համպի Կոնեռուն (2597), Աննա Մուզիչուկը (2585), Ժժաո Սյուեն (2565), Նանա Ձագնիձեն (2554), Կատերինա Լահնոն (2547), Մարի Սեբագը (2537), Նադեժդա Կոսինցեւան (2531) եւ Անտոանետա Ստեֆանովան (2530):

Հայաստանը ցուցակում ներկայացնում են Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը: Երկուսն էլ պահպանել են վարկանիշները: Դանիելյանը 2466 վարկանիշով 29-րդ տեղից նահանջել է 30-րդ հորիզոնական, իսկ Մկրտչյանը 2458 վարկանիշով 34-րդ տեղից բարձրացել է 33-րդ հորիզոնական:

ՖԻԴԵ-ի անդամ երկրների ցանկում Հայաստանը միջին վարկանիշով (2661) 6-րդն է: Առջեւում են Ռուսաստանը (2747), Ուկրաինան (2704), Չինաստանը (2669), Ֆրանսիան (2663) եւ Հունգարիան (2661): Ադրբեջանը 2653 վարկանիշով 8-րդ տեղում է, Վրաստանը (2594) 16-րդն է:

# Գավաթի մրցաշարը վերսկսվում է

**Այսօր կայանալիք 2 հանդիպումներով մեկնարկում է ֆուտբոլի Հայաստանի 2013-ի գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչ փուլը: Մրցաշարի մեկնարկը տրվել էր անցյալ տարվա նոյեմբերի 14-ին «Բանանցի» եւ «Ալաշկերտի» մրցավեճով: 1/8 եզրափակիչի միակ զույգի մրցավեճում 2 հանդիպումներում էլ դարպասներն անառիկ էին մնացել: Քառորդ եզրափակիչի ուղեգրի բախտը վճռվել էր 11 մ հարվածաշարով, որն ավելի դիպուկ էր իրագրել «Ալաշկերտը»:**

**Այսօր «Ալաշկերտը» «Նաիրի» մարզադաշտում կհյուրընկալի Կապանի «Գանձասարին», որը թեեւ զգալի համալրմանը, նախապատրաստական շրջանում անհաջող ելույթներ ունեցավ: Թիմի կազմն օրերս համալրել է նաեւ Դու Բալան: Բրազիլացի հարձակվողը 2010-ից հանդես էր գալիս «Բանանցում»՝ աչքի ընկնելով բարձր արդյունավետությամբ, սակայն հետագայում ծանր վնասվածք ստացավ:**




**Այսօրվա մյուս խաղում «Փյունիկը» սեփական մարզադպրոցի խաղադաշտում կհյուրընկալի գավաթի անցյալ տարվա եզրափակիչի մասնակից «Իմպուլսին»:**

**Վաղը կկայանան քառորդ եզրափակիչի մյուս 2 հանդիպումները: Գործող գավաթակիր Գյումրիի «Շիրակն» Իջեւանում կհյուրընկալի «Արարատին», իսկ Ավանի ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում «Ուլիսը» կընդունի «Միկային»: Գավաթային բոլոր հանդիպումներն էլ կսկսվեն ժամը 14-ին:**

# Ալեքսանդր Պետրոսյանը տեղափոխվեց «Գանձասար»

Նոր մրցաշրջանի շեմին Կապանի «Գանձասարը» համալրվեց եւս մեկ ֆուտբոլիստով: Ակումբի հետ պայմանագիր է կնքել «Արարատից» հեռացած Ալեքսանդր Պետրոսյանը, որը ժամանակին հանդես է եկել «Գանձասարում»: «Արարատում» Պետրոսյանը խաղում էր պաշտպանությունում, թեեւ մինչ այդ նա հիմնականում գործում էր առջեւի գծում: Սեւադա Արզումանյանն էլ ֆուտբոլիստին մտադիր է խաղացնել պաշտպանությունում, մանավանդ որ թիմի փորձառու պաշտպան Արմեն Տաշինցյանը ներկայումս վերականգնվում է վնասվածքից ու շարք կվերադառնա միայն 2 շաբաթից:

Բացառված չէ, որ «Գանձասարը» համալրի օտարերկրացի հարձակվող, որի հետ ակումբը բանակցում է: Ձմռան նախապատրաստական շրջանում «Գանձասարը» զգալի համալրում ստացավ: Թիմի մարզաշապիկը կկրեն Սամվել Մելքոնյանը, Նարեկ Բեգլարյանը, Արտակ Դաշյանը, Գրիշա Խաչատրյանն ու բրազիլացի Ուլիան Պոտկերը:

# Խաղը կկայանա օգոստոսի 11-ին

**Երկկողմանի համաձայնությամբ, փոխվել է ֆուտբոլի Եվրոպայի 2015-ի երիտասարդական առաջնության Հայաստան-Ղազախստան ընտրական հանդիպման անցկացման օրը: Օգոստոսի 13-ի փոխարեն խաղը կկայանա 2 օր շուտ: Հիշեցնենք, որ Հայաստանի երիտասարդական հավաքականն ընտրական մրցաշարում ընդգրկված է 10-րդ խմբում, որտեղ բացի ղազախներից, մրցելու է նաեւ Ֆրանսիայի, Բելառուսի եւ Իսլանդիայի երիտասարդական հավաքականների հետ:**

# Սլավիկ Հայրապետյանը 23-րդն է

**Միլանում ընթացող գեղասահքի աշխարհի պատանեկան առաջնությունում Սլավիկ Հայրապետյանը կարճ ծրագրում զբաղեցրել է 23-րդ տեղը: Այդ արդյունքը հնարավորություն կտա Սլավիկին շարունակելու պայքարը եւ հանդես գալու ազատ ծրագրում:**

## ՇԱԽՄԱՏ

# Ղարամյանն ու Գրիգորյանը հետապնդում են առաջատարներին

**Ֆրանսիական Քափել լա Գրանդում անցկացվող շախմատի մրցաշարի 7-րդ տուրում աղյուսակը գլխավորող Կարեն Գրիգորյանը ոչ-ոքի խաղաց Եվգենի Վորոբյովի հետ ու վաստակեց 5,5 միավոր: Նա զիջեց առաջատարի դիրքը: 6-ական միավորով աղյուսակը գլխավորեցին ռուսաստանցի Սանան Սյուգիրովը, բելառուս Ալեքսեյ Ֆյոդորովը եւ ուկրաինացի Սերգեյ Ֆեդորչուկը:**

**Տուրը հաջող էր Տիգրան Ղարամյանի համար, որը հաղթելով Նորմունդս Միեզիսին, վաստակեց 5,5 միավոր: Իսկ ահա Սամվել Տեր-Սահակյանը մրցաշարում առաջին պարտությունը կրեց՝ զիջելով հնդիկ շախմատիստ Պարիմարջան Նեգիին: Էլինա Դանիելյանը ոչ-ոքի խաղաց Ալեքսանդր Դանինի հետ ու վաստակելով 5 միավոր, շրջանցեց 4,5 միավոր ունեցող Սամվել Տեր-Սահակյանին:**

**5-ական միավոր են վաստակել նաեւ Դավիթ Հարությունյանն ու Հովհաննես Գաբուզյանը: Դավիթը հաղթեց Տասյանա Կոստյուկին, իսկ Գաբուզյանը պարտության մատնեց ռուսաստանցի Կարինա Համբարձումովային: Վերջինս ունի 4 միավոր: Նույնպիսի արդյունք ունեն նաեւ Ռոբերտ Աղասարյանն ու Եվգենիա Դոլուխանովան: Աղասարյանը պարտվեց Անդրեյ Ժիգալկոյին, իսկ Դոլուխանովան հաղթեց Ժան Լաբադիեին:**

**8-րդ տուրում Տիգրան Ղարամյանը սպիտակներով կմրցի առաջատարներից մեկի՝ Ալեքսեյ Ֆյոդորովի հետ, իսկ Կարեն Գրիգորյանի մրցակիցը կլինի Մաքսիմ Ռոդշտեյնը:**

# Ավարտական տուրը հաղթական էր

**Իրանում ավարտվեց շախմատի մրցաշարը, որի մասնակիցների թվում էին Սարգիս Մանուկյանն ու Արմինե Բաբայանը: Ավարտական տուրը հաջող էր հայ շախմատիստների համար: Մանուկյանը հաղթեց Ալի Մոսավիին, Բաբայանը պարտության մատնեց Ամիր Իրանֆարին: Սարգիս Մանուկյանը 7,5 միավորով գրավեց 17-րդ տեղը, իսկ Արմինե Բաբայանը 7 միավորով հանգրվանեց 27-րդ հորիզոնականում:**

**Մրցաշարի հաղթողը որոշվել էր դեռեւս նախորդ տուրում: Գլխավոր մրցանակը նվաճեց իրանցի Օմիդ Նորուզին, որը վերջին տուրում էլ հաղթելով Մորթեզ Մահջոբին, 11 հնարավորից վաստակեց 10,5 միավոր: 8,5-ական միավորով հաջորդ տեղերը զբաղեցրին վրացիներ Շոթա Ազալաձեն ու Դավիթ Բենիձեն, իրանցիներ Էհսան Ղաեմ Մաղամին, Ամիռեզա Պուրամեզանալին եւ Մորթեզ Ասգարին:**

# Մարզիչները գոհ են երիտասարդ հրաձիգներից

**Դանիայում ընթացող հրաձգության Եվրոպայի առաջնությունում երիտասարդների տարիֆային խմբում կայացան օդամղիչ հրացանից 10 մ տարածությունից մրցումները: Հայաստանը ներկայացրած Հրաչ Բաբայանը 614,5 միավորով 56 մարզիկների մեջ զբաղեցրեց 20-րդ հորիզոնականը: Սուրեն Բերյանը 605,3 միավորով 49-րդն էր: Հավաքականի մարզիչների կարծիքով այս ցուցանիշները մեր երիտասարդ հրաձիգների համար լավ արդյունք կարելի է համարել:**

# Կլիչկոն նախընտրեց Ֆրանչեսկո Պիանետային

**Գերծանրքաշային կարգում WBA-ի, WBO-ի եւ IBF-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կլիչկոյի հաջորդ մրցակիցը կլինի իտալացի Ֆրանչեսկո Պիանետան: Մենամարտը նախատեսվում է անցկացնել մայիսի 4-ին Մանհեյմի մարզադաշտում:**

**Ֆրանչեսկո Պիանետան ծնվել է 1984-ին: Պրոֆեսիոնալ ռինգում նորամուտը նշել է 2005-ին եւ առայժմ անպարտելի է: 29 մենամարտերից 28-ում իտալացի բռնցքամարտիկը հաղթել է, մեկում գրանցվել է ոչ-ոքի: Միակ ոչ-ոքին գրանցվել է 2009-ին լեհ Ալբերտ Սոսնովսկու հետ մենամարտում, որին հետագայում հաղթել էր Վիտալի Կլիչկոն:**

**WBA-ի վարկածով սուպերչեմպիոնն է եւ իր տիտղոսը պետք է պաշտպանի նույն վարկածով չեմպիոնական գոտու տեր, ռուսաստանցի Ալեքսանդր Պովետկինի հետ մենամարտում: Երկու բռնցքամարտիկների ներկայացուցիչների միջեւ սկսվել էին բանակցությունները: Սկզբում նախատեսվում էր, որ ամեն ինչ կվճռվի հունվարի 17-ին: Հետագայում WBA-ի ղեկավարությունը կողմերին առաջարկել էր մինչեւ փետրվարի 28-ը պայմանագիր կնքել: Սակայն դա էլ տեղի չունեցավ: Այնուհետեւ WBA-ն հայտարարեց, որ մարտի 18-ին մենամարտը կազմակերպելու մրցույթ է անցկացնելու եւ անկախ դրա արդյունքից Կլիչկոն մենամարտի համար ստանալու է մրցանակային հիմնադրամի 75 տոկոսը, իսկ Պովետկինը՝ 25 տոկոսը: Սակայն Պովետկինի մենեջեր Վլադիմիր Խրյունովը համաձայն չէր: Նա առաջարկում էր պարգեւավճարի 55 տոկոսը հատկացնել Կլիչկոյին, 45 տոկոսը՝ Պովետկինին: Սակայն WBA-ն հաստատակամ էր իր որոշման մեջ՝ 75 եւ 25 տոկոս:**



**Սոսնովսկու հետ մենամարտից հետո Պիանետան հիմնականում մրցում էր վետերան բռնցքամարտիկների հետ՝ հաղթելով 46-ամյա Ֆրենկ Սկելտոնին, 44-ամյա Ֆրանսուա Բոտային եւ 47-ամյա Օլիվեր Մակոլին: Այնպես որ Պիանետան պրոֆեսիոնալ ռինգում հայտնի բռնցքամարտիկ չէ:**

**Ինչպես հայտնի է, Վլադիմիր Կլիչկոն գերծանրքաշային կարգում**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# «Խոջալու». Աղաշխարել ինչի՞ համար

*1-ին էջից*

Մենք այդ թեմայով մի շարք հրապարակումներ արել ենք: Օգտագործել ենք բացառապես ադրբեջանական աղբյուրներ: Օրերս modern.az-ը ներկայացրել էր «Խոջալուում երկու ծնողներին կորցրած» Համայիլ Խալիլովայի «հուշերը»: 1992-ի փետրվարին Համայիլը 6 տարեկան է եղել: Նրա անունից պատմվում է, որ իրենց ընտանիքը՝ հայրը, մայրը, տատը եւ երեք աղջիկ երեխաները Խոջալուից դուրս են եկել անվտանգ, հետո «անտառում մոլորվել, իրար կորցրել են, ինքը եղել է հոր հետ»: Անտառից դուրս են եկել, «քայլել դեպի Աղդամ, բայց երբ քիչ էր մնացել, որ հասնեին, հայրը կրծքավանդակին չորս գնդակ է ստացել»:

Շարունակությունը զուտ «գեղարվեստական» է՝ ինչպես «հայրը մոտեցած բարեկամներին խնդրել է, որ աղջնակին ողջ-առողջ մորը հասցնեն», ինչպես է ինքը «մի քանի անգամ խմբից փախել-մոտեցել վիրավոր հորը, ուղղել նրա գլխարկը» եւ այլն: «Հետո մեզ դիմավորեցին զինվորական հագուստով երիտասարդ մարդիկ եւ մեզ տարան Աղդամ»,- եզրափակել է Խալիլովան: Մոր մահվան մասին նա լսել է արդեն Աղդամում:

Հավատո՞ւմ է «Զերկալո»-ի մեկնաբանը, որ 6-ամյա աղջնակը կարող էր իմանալ, թե քանի՞ գնդակից է խոցվել հայրը: Եվ ամենակարեւորը՝ եթե Խոջալուի խաղաղ բնակիչները «ընկել են հայերի փոթորկալի կրակի տակ», եթե «մարդկանց գնդակահարել են դիմահար կրակով՝ չխնայելով մանուկներին, ծերերին եւ կանանց», ինչպես Խոջալուի մասին պնդում է Ադրբեջանի պետական քարոզչությունը, ապա ինչպե՞ս է փրկվել հոր ձեռքը բռնած, նրա հետ կողք կողքի քայլած Համայիլը, ինչո՞ւ նա հորից բացի մի երկրորդ մարդու մահվան ականատես չի եղել եւ այդ մասին ոչինչ չի պատմել:

«Չկար էլեկտրականություն, գազ»,- Խոջալուի մասին հիշել է գյուղի բնակիչներից մեկը: **www.erevangala500.com** հղումով «Զերկալո»-ի մեկնաբանին խորհուրդ ենք տալիս ծանոթանալ «Խոջալուի դատախազ» Աթաքիշ Աթաքիշեւի վկայությանը, որ գյուղի էլեկտրականությունն անջատել են իրենք, որպեսզի «Ստեփանակերտի զրահատեխնիկայի վերանորոգման գործարանը չաշխատի»: Խոջալուցի «գերի» Վալեհ Հուսեյնովը վկայում է, որ 1992 փետրվարի 25-ի երեկոյան գյուղում մնացած մարդիկ, «լսելով կրակոցներ, հրճվել են՝ ենթադրելով, որ Աղդամից հարձակվել են Ասկերանի վրա» (տես՝ http://www.contact.az/docs/2012/Want%20to%20Say):

Այսպես կարելի է երկար շարունակել: Բայց՝ եւս մեկ հղում. obyektiv.tv-ի արխիվում «Զերկալո»-ի մեկնաբանը կարող է գտնել ԱԺՃ նախկին առանցքային դեմքերից մեկի, ներկայումս «Ազգային անկախություն» կուսակցության առաջնորդ Էթիբար Մամեդովի վկայությունը, որ «դեռեւս 1991-ի աշնանը արտասահմանից Նախիջեւան է հասցվել 1500 ավտոմատ, որից 500-ը անձամբ իր կողմից հատկացվել է Խոջալուին»: Կրկնենք, 500 ավտոմատ Խոջալուին է հանձնվել 1991-ի աշնանը: Իսկ ադրբեջանական քարոզչությունը խոսում է «լիովին անպաշտպան» բնակավայրի մասին:

Վերջապես, նույն մեկնաբանը նախորդ հրապարակման մեջ արդարացիորեն գրել է, որ «Մութալիբովը չէր կարող էվակուացնել Խոջալուի խաղաղ բնակիչներին, նրան իսկույն կմեղադրեին «քաղաքը» (չակերտները մերն-Վ. Ա.) հանձնելու մեջ: Ինչ-որ մեկին, հետեւաբար, պետք է եղել, որպեսզի Խոջալուում խաղաղ բնակչության զանգվածային սպանություններ լինեն: Եվ երբ փետրվարի 25-ին դա տեղի չի ունեցել, այդ ինչ-որ մեկը Խոջալուից 15 կմ. հեռավորության վրա վայրագություններ է գործել: Այդ ինչ-որ մեկի ինքնությունը պարզելու մեջ է խնդիրը, ոչ թե նրանում, թե ով ավելի բարձր կգոռա «մանկասպանության» մասին:

Դա նաեւ «Զերկալո»-ի մեկնաբանի խնդիրն է՝ պահանջել, որպեսզի իր երկրում բացվեն արխիվները: Մասնավորապես՝ եթե Ադրբեջանի գլխավոր դատաբժիշկը ստորագրել է 181 դիակի փորձաքննության փաստաթուղթ, ապա ո՞րն է Խոջալուի «613 զոհերի» մասին տեղեկատվության հիմքը:

# Էրդողանը ընդդեմ սիոնիզմի

**Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն երեկ խստիվ դատապարտել է իր թուրք պաշտոնակից Ռեջեփ Թայիփ Էրդողանի արած հայտարարությունը, որը սիոնիզմն անվանել էր մարդկության դեմ ուղղված հանցագործություն:**

**Նաթանյահուի դիվանատան մամլո ծառայությունը մեջբերում է նրա հետեւյալ արտահայտությունը. «Մենք կարծում էինք, թե նման ստահոդ եւ անմիտ հայտարարությունների ժամանակներն արդեն անցել են»:**

**Էրդողանի քննադատությամբ հանդես են եկել նաեւ մի շարք իրավապաշտպան կազմակերպություններ, այդ թվում UN Watch-ը, որը դատապարտել է նաեւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի վարքագիծը: Վերջինս Թուրքիայի վարչապետի կողքին էր նրա խայտառակ հայտարարության ժամանակ, բայց չարձագանքեց այդ խոսքերին: Իրավապաշտպանները թուրք վարչապետից պահանջել են ներողություն խնդրել:**

**Տհաճ միջադեպը տեղի էր ունեցել Վիեննայում անցկացված Քաղաքակրթությունների դաշինքի համաժողովում: Այնտեղ ելույթ ունենալով՝ թուրք քաղաքական գործիչը եվրոպական երկրներին ամբաստանել էր, թե դրանց տարածքներում ապրող մահմեդականները ենթարկվում են խտրականության: «Նման նախապաշարմունքներն անթույլատրելի են: Ուստի մենք պարտավոր ենք իսլամատյացությունը հայտարարել մարդկության դեմ ուղղված նույնպիսի հանցագործություն, ինչպիսիք են սիոնիզմը, հրեատյացությունը եւ ֆաշիզմը»:**

Հավելված N 1
ՀՀ Արդարադատության նախարարի
2011 թվականի դեկտեմբերի 1-ի
N 103-Ն հրամանի

«Հավելված N 1
ՀՀ Արդարադատության նախարարի
2009 թվականի դեկտեմբերի 22-ի
N 319-Ն հրամանի»

Ձեւ

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի «22» 02 2013 թ.
որոշմամբ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«Պրոմեթեյ Գիտություն Բարեգործական Հիմնադրամ» հիմնադրամի 2012 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Պրոմեթեյ Գիտություն Բարեգործական Հիմնադրամ»
1.1. Գրանցման համարը՝ 28616004372
1.2. գրանցման ամսաթիվը՝ 01.11.2001 թ.
1.3. Գտնվելու վայրի հասցեն՝ ք. Երեւան, Հանրապետության 44/2
1.4. Հեռ. 54-55-41 1.5. Բջջ. 093-56-39-54 1.6. Կայք 1.7. Էլ. փոստ

2. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ -
*Անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձեւը, ստացված օգնության չափը (դրամային արտահայտությամբ)*

3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ -
*Անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձեւը, ստացված օգնության չափը (դրամային արտահայտությամբ)*

4. Աշխատավարձը՝ -
*Անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձեւը, ստացված օգնության չափը (դրամային արտահայտությամբ)*

5. Իրականացված ծրագրերը՝ ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ ֆին. օգնություն
1. Կոնֆերանսի կազմակերպման համար
2. Օգնություն անապահով ուսանողների ուսման վարձը վճարելու համար

Ծրագրի անվանումը, ծախսված գումարը
1. ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ
ֆին. օգնություն - 600 000 վեց հարյուր հազար դրամ
2. Ուսման վարձ - 810 000 ութ հարյուր տաս հազար դրամ

6. Ֆինանսական աղբյուրները՝ «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ ֆինանսական աջակցություն
*Անունը (անվանումը), ծրագրի անվանումը, չափը - 12 000 000 տասներկու միլիոն դրամ*

7. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝
9 555 000 (ինը միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ

7.1. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝
1 410 000 (մեկ միլիոն չորս հարյուր տաս հազար) ՀՀ դրամ

8. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի
*Անուն, ազգանուն (անվանումը)* «Աուդիտ Սերվիս» Աուդիտորական Խորհրդատվական Ընկերություն տնօրեն Գոռ Դավթյան

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Պրոմեթեյ-Գիտություն» բարեգործական հիմնադրամի ֆինանսական վիճակը, եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները եւ դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի ՖՄԿ ՖՀՄՍ :

*«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն՝
որակավորված աուդիտոր
Գոռ Դավթյան*

27.02.2013 թ.

Տնօրեն Գ. Գեւորգյան
Գլխավոր հաշվապահ Եվ. Հարությունյան

## ՀՌՈՄ

# Բենեդիկտոս 16-րդը այժմ «սովորական ուխտավոր» է

**Բենեդիկտոս 16-րդ պապը այլեւս Հռոմի պապը չէ: Վատիկանում պապական գահը թափուր է հայտարարված: Մինչ այդ՝ փետրվարի 28-ի երեկոյան Բենեդիկտոս 16-րդը հրաժեշտ էր տվել բյուրավոր հավատացյալներին եւ իտալական օդուժի ուղղաթիռով մեկնել Կաստել Գանդոլֆո նստավայր:**

**Ավելի վաղ Բենեդիկտոս 16-րդը Վատիկանում հրաժեշտ էր տվել կարդինալներին եւ ողջերթի խոսքեր ասել նրանց մեջ գտնվող ապագա պապին, խոստացել էր հնազանդվել նրան, ասելով, որ ինքը հիմա արդեն «սովորական ուխտավոր» է:**

**Մարտի 1-ին բազմաթիվ կարդինալներ տարբեր երկրներից ժամանեցին Հռոմ: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ բարձրաստիճան հոգեւորականների շատ մեծ խումբ է եկել ԱՄՆ-ից: Մեծ Բրիտանիայից ոչ մի կարդինալ չի եկել: Պապական գահի բրիտանացի միակ հավանական թեկնածուն՝ Քիթ Օ'Բրայանը օրերս հրաժարական տվեց սեռական ոտնձգությունների հետ կապված մեղադրանքների պատճառով: Եվրոպացի կարդինալների մեծ մասը իտալացիներ են: Նոր պապի ընտրության նպատակով Վատիկանում կարդինալների ժողովը տեղի կունենա մարտի երկրորդ տասնամյակում:**

**«Մեգա Գալ Գրուպ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբերի 2012 թ.**

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 1 | 4584 | 4584 |
| | | 4584 | 4584 |
| Ընթացիկ ակտիվներ | | | |
| Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր | | - | - |
| Կարճաժամկետ փոխառություն | | - | - |
| Մնացորդներ դրամարկղում եւ բանկերում | 2 | 81 | 66 |
| Ընդամենը ակտիվներ | | 4665 | 4650 |
| Սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | | |
| Կապիտալ եւ պահուստներ | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 3 | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | | 3007 | 3284 |
| | | 3057 | 3334 |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ վարկեր | | | |
| Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեին | 4 | 1608 | 1316 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | | | |
| Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | 4665 | 4650 |

***Գ. Գեւոգյան
տնօրեն***

**«Մեգա Գալ Գրուպ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբերի 2012 թ.**

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012 թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի | 2011 թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի |
|---|---|---|---|
| Շարունակվող գործունեություն | | | |
| Հասույթ | 5 | 30079 | 28121 |
| Վաճառքի ինքնարժեք | 6 | (9274) | (10092) |
| Համախառն շահույթ/ վնաս | | 20805 | 18029 |
| Բաշխման ծախսեր | | | - |
| Վարչական ծախսեր | 7 | (1732) | (1728) |
| Հաստատագրված վճարի գծով ծախս | | (18750) | (16000) |
| Գործառնական այլ ծախսեր | | (600) | |
| Տարվա զուտ շահույթ շարունակվող գործունեությունից | | (277) | 301 |
| Ընդհատվող գործունեություն | | | |
| Տարվա շահույթ ընդհատվող գործունեությունից | | | |
| Տարվա շահույթ | | (277) | 301 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | | |
| Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք | | (277) | 301 |

***Գ. Գեւորգյան
տնօրեն***

*Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում ներկայացված կից ծանոթագրությունները:*

ВТБ **Հայտարարություն**

«ՎՏԲ - ՀայաստանԲանկ» ՓԲԸ-ն հայտարարում է տնտեսական նշանակության պրանքների մատակարարման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպություններ ընտրելու բաց մրցույթ:

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել «ՎՏԲ–ՀայաստանԲանկ» ՓԲԸ՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյանց. 46 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ 2013թ. ապրիլի 02-ը, ժամը 17:00-ն ներառյալ:

Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2013թ. ապրիլի 03 -ին , ժամը 17:00-ին:

Մրցույթին մասնակցելու հրավերն ու Մրցույթի պայմանները տեղադրված են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.vtb.am:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «ՎՏԲ-ՀայաստանԲանկ» ՓԲԸ Մրցութային կոմիտե:

Կոնտակտային անձ՝
Լուսինե Սուսանյան
Հեռ. +(37410) 51-37-49, ներքին՝ 8 3302
Էլ. փոստ՝ l.susanyan@vtb.am
Հեղինե Մելքումյան
Հեռ. (+37410) 51-37-16
Էլ. փոստ՝ h.a.melkumyan@vtb.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 1.1.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: